

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱՁԳԱՑԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԵՐՐՈՐԴ ԴԱՐԱՄՈՒՏ

Մխիթարեան Միաբանութիւնը 1901 սեպտեմբեր 8ին պիտի տօնէ իր հաստատման երրորդ զարսմուտը: Ս. Ղազարու վանքին այս առթիւ ազդիւ ուղղուած հրատարակեալ յայտարարութիւնը ներկայ յօղուածիս հետ կը հրատարակենք:

Գրական հիմն սր ու թեան մը երկու հարիւր տարւան անրնդհատ շարունակութիւնը մեր առհմային պատմութեան այն հոյակապ էջն է որ կը հաստատէ թէ համարեալ օգուով յարատեւող տոկուն աշխատութիւնը մեր ցեղին պահպանումին եւ յառաջդիմութեան երախտագործ սատարը եղած է: Այդ երկդարեան Յիբելեանը բարեպատեան հոգեպիպութեամբ կը հանդիպի այնպիսի ժամանակ մը ուր սրտապնդումի կարօտ ենք. եւ ահա գարեբուանջրպետէն մեզ հասնող ձայն մը կը մզէ մեզի խորհիլ թէ մոզովորդ մը իր մտքին ուժովը եւ բարոյական գործութեամբ կարող է արիարար դիմադրաւել նիւթական բիրտ ուժին, եւ ապրիլ ապագային վրայ հաւատքովը:

Որոշապէս շենք գիտեր թէ ինչ խորհուրդներ երիտասարդ Մխիթարը Սերաստիպէն վեպի կամաւոր տարագրութիւն կը վարէին, բայց կրնանք ընդունիլ որ ըմբռնած իր թէ հայ ազգը զիտ երկար ատեն ճնշուած պիտի մնար իր աշխարհին վրայ ծանրացող օտար լուծին ներքեւ: Ակնեք կը տեսնէր իւր սմին նիւթական ուժին զէմ հայ նիւթական ուժին մը քսուած անհնար սորութիւնը: Ազատագրութիւնը մամանակէն սպասելով, պէտք էր ջանալ ցեղին օգին անմահ պահել, հայ միտքը ստրկացումի եւ կորստեան վտանգէն փրկելով: Մխիթարեան հիմնարկութիւնը յոտակօրէն կը պարզէ Մեծ-Սերաստացիին յղացած խորհուրդները: Այդ վտանգը երկու գար է կը գործադրէ ծրագիր մը որուն նպատակն է նիւթապէս անգոր, բայց բարոյապէս զօրաւոր հայ ցեղին ինքնապահպանութիւնը ապահովել:

Մխիթարի ծրագիրը հիմնուած էր զրքերու հրատարակութեան եւ անոնց տարածման սկզբունքին վրայ: Վանականները իրենց կրօնաւորի հանգամանքովը պարտաւորուած էին ահեղապէս լուրջ մատենագրութիւն մը ստիպել ազգին մէջ. վանքի մը հրատարակութեանց ներքիլ չէ տող մը նուիրել կնոջ եւ սիրոյ: Այդ մենակեացները հայ միտքը սկսան մարզել պատմութեամբ, իմաստասիրութեամբ, գիտութեամբ. իրենց ազդեցութիւնը բարերար եղաւ մեր մտաւորական ուղղութեանը վրայ: Հայ ազգը իր առաջացած ընթացքին մէջ Մխիթարեանց իմաստուն առաջնորդութեամբը հետեւեցաւ իր ուղեղային կազմաւածքին յարմարող բնական ճամբուն: Երբ այդ վանքին երկու գարու հրատարակութիւնները առանձինն առանձինն կը պարզուի հմայիչ հաւաքատեղ մը: Այդ վանքի միջոցով կը տեսնուի թէ Մխիթար եւ իր աշակերտները Հայաստանի զաւակները բլլալով, իրենց ցեղը իր օրրանին մէջէն կը ճանչնային, եւ այդ ցեղին իր հարազատ ներկայացուցիչները, անոր բոլոր յատկութիւններովը օժտուած էին. հրատարակած են ծանրակշիռ, լրջաբան զրքեր, քաջ զիտնալով որ հայ միտքը հաստատուն սնունդի կարօտ է, եւ այդ սնունդը մարտելու, իրացնելու ընդունակ է:

Ժամանակին հետ Մխիթարեանները ընդլայնեցին իրենց ծրագիրը: Կրթական հաստատութիւններով որոնք Երազայի կեդրոնէն մինչեւ Հայաստանի խորը կը տարածուին, հզօրապէս նպաստեցին ու կը նպաստեն հայութեան զարգացմանը: Մէկ կողմէն ուժ տուին նախնական գաստիարակութեան, միւս կողմէն բարձրագոյն կրթութեան. եւ զեղարեւոտի ու զիտութեան բաշխութիւն ճիշդը շատ հայ աշակերտներ ունեցան:

Այդ վանականները միտնալով հայ ազգը Երազայի շատ զեղափալ պատկերներով ներկայացուցին: Գիտութեանց աշխարհին հետ սերտ յարաբերութեամբ յաջողեցան ընդհանուր մարզիկային պատմութեան ուսումնասիրութիւններուն մէջ հայ ցեղին իրեն արժանաւոր մեծակալ տեղը տալ: Իսկ իրենց մենաստանները հին ու նոր հայութեան իրր ցուցահանդէսները, միշտ կը գրաւեն Եւրոպայի ու Ամերիկայի համալրանքն ու յարուսեք զէպի հայ ազգը:

Երկու գար է վեր վենետիկ ուղեւորող բոլոր Եւրոպացիները ու Ամերիկացիները գրեթէ առանց բացառութեան ալցելած են Ս. Ղազարու Հոն գացեր եւ սքանչաւորուած էին ահեղապէս լուրջ մատենագրութիւն մը ստիպել ազգին մէջ. վանքի մը հրատարակութեանց ներքիլ չէ տող մը նուիրել կնոջ եւ սիրոյ: Այդ մենակեացները հայ միտքը սկսան մարզել պատմութեամբ, իմաստասիրութեամբ, գիտութեամբ. իրենց ազդեցութիւնը բարերար եղաւ մեր մտաւորական ուղղութեանը վրայ: Հայ ազգը իր առաջացած ընթացքին մէջ Մխիթարեանց իմաստուն առաջնորդութեամբը հետեւեցաւ իր ուղեղային կազմաւածքին յարմարող բնական ճամբուն: Երբ այդ վանքին երկու գարու հրատարակութիւնները առանձինն առանձինն կը պարզուի հմայիչ հաւաքատեղ մը: Այդ վանքի միջոցով կը տեսնուի թէ Մխիթար եւ իր աշակերտները Հայաստանի զաւակները բլլալով, իրենց ցեղը իր օրրանին մէջէն կը ճանչնային, եւ այդ ցեղին իր հարազատ ներկայացուցիչները, անոր բոլոր յատկութիւններովը օժտուած էին. հրատարակած են ծանրակշիռ, լրջաբան զրքեր, քաջ զիտնալով որ հայ միտքը հաստատուն սնունդի կարօտ է, եւ այդ սնունդը մարտելու, իրացնելու ընդունակ է:

Ժամանակին հետ Մխիթարեանները ընդլայնեցին իրենց ծրագիրը: Կրթական հաստատութիւններով որոնք Երազայի կեդրոնէն մինչեւ Հայաստանի խորը կը տարածուին, հզօրապէս նպաստեցին ու կը նպաստեն հայութեան զարգացմանը: Մէկ կողմէն ուժ տուին նախնական գաստիարակութեան, միւս կողմէն բարձրագոյն կրթութեան. եւ զեղարեւոտի ու զիտութեան բաշխութիւն ճիշդը շատ հայ աշակերտներ ունեցան:

ցիր են Լորա Պայրնէն մանչեւ Մորիս Պարէս հազարաւոր բանաստեղծներ, վիպասաններ, հրապարակագիրներ, զբրականութեան ամէն ճիւղին պատկանողներ, ինչպէս եւ գիտունները: Առանց հայ վանքը տեսնելու Վենետիկէն չեն հեռացած կլատսթոն, Քասթելլար, ու պետական ուրիշ շատ անձնաւորութիւններ: Կայսրեր, թագաւորներ, թագուհիներ, իշխանագուներ, զօրավարներ ամէնքն ալ իրենց պարտականութիւնը սեպած են մեծաբանքի այցելութիւն մը Ս. Ղազար: Չենք յիշատակեր սոսկականները որոնց ոչ թիւը կայ, ոչ համարը: Վիեննայի վանքը մեծ մայրաքաղաքի մը մէջ գետեղուած բլլայով բնականաբար չի կրնար ընդունիլ ամէն օր հոնկէ անցնող դարձող բիրաւոր ուղեւորներու բոլորին ալ այցելութիւնը. բայց ամէն նշանաւոր անձնաւորութիւն ուզած է վայելել Հայոց վանքը այցելելու հաճոյքը:

Մխիթարեանց յայտարարութեան մէջ կը տեսնենք թէ յատկապէս Յոբելեան հանդէսին առթիւ կարգ մը գրքեր պիտի տպագրուին: Ասոնք ամէնքն ալ նպատակաւ յարմար են եւ ամէնքն ալ ուրախութեամբ պիտի կարդանք զանոնք: Բայց կը կարծենք, մանաւանդ համոզուած ենք թէ հայ ազգին վրայ հմայիչ տպաւորութիւն պիտի գործեն, ու Եւրոպայի աչքին շատ ուշադրաւ պիտի բլլան երկու ուրիշ հատորներ ալ եթէ Մխիթարեան միասնութեան երկու ճիւղերը միաբանելով տպագրեն զանոնք: Մեր փափազն է առաջին հատորի մը մէջ ամփոփուած տեսնել երկու դարէ ի վեր Վենետիկի եւ Վիեննայի վանքերը այցելող ականաւոր բոլոր անձնաւորութեանց անունները, թուականի կարգով ու կենսագրական համառօտ տեղեկութեամբ. ու իւրաքանչիւր անունին թով՝ վանքերուն արձանագրութեանց հատորներուն մէջ թողուած յիշատակագրութիւնները: Իսկ երկրորդ հատոր մը պարունակէր բոլոր օտարազգիներու Մխիթարեանց, և այս առթիւ ամբողջ հայութեան վրայ հրատարակած յօդուածներու գոնէ էն նշանաւոր կտորները: Գրքեր, հանդէսներ, օրագիրներ ամէն երկրէ, ամէն լեզուաւ, որքան էջեր կը պարունակեն որոնք մոռցուած են, եւ գրեթէ ազգին անձանթով. Քասթելլարի մը դիւթիչ, մոգական պերճ տողերը կարգացող շատ հայ կը գտնուի: Ինչ որ մենք կարգաւ առիթն ունեցած ենք անջնջելի տպաւորութիւն թողած է մեր սրտին ու մտքին վրայ: Ամէն ցեղի, ամէն ազգի, ամէն երկրի մտաւորականները, բլլան Կաթոլիկ, բլլան Յունադաւան, բլլան Բողոքական, կամ թէ չպատկանին ո՛ր և է դաւանանքի, ամէնքն ալ միևնոյն զգացեալ հոգեով, միևնոյն յուզեալ սրտով իրենց սէրն ու համարանքը յայտնած են Արեւելքի հնագոյն մէկ ցեղին պատկանելի ներկայացուցիչներուն, եւ անոնց հետ՝ ամբողջ Հայութեան: Երևոյթը սովորական չէ: Այս երկու հատորները հրատարակուելով թէ հայերէն, եւ թէ Եւրոպական քանի մը լեզուներով, շատ պիտի ծախու լեզուաւ պիտի գզացնեն հայ ազգին թէ ինք որքան որ ալ մարմնապէս ստրկացած է բայց իր մտքին մշակութեամբը Ամերիկայի ու Եւրոպայի համակրանքը զրաւած

է: Ու հին քաղաւորութեան մը ներկայացուցիչ, միանգամայն Ասիոյ համար նոր քաղաքակրթութեան մըն ալ ապագայ ուհիւրան կը համարուի: Ու այդ հատորները յուշարար մըն ալ մեծ ազգերուն: Մխիթարեանց Ոսկի Գիրքը պիտի կազմեն այդ հատորները, եւ փառքի տիտղոս մը հայ ազգին: Մխիթար Արքային արձանը կանգնուած տեսնելու իղձը զոր ունին իր աշակերտները, շատ բնական զգացում մըն է, բայց գիրք մը որ ամէն հայ տուն պիտի մտնէ, ու Ամերիկայի, Եւրոպայի ամէն կողմը պիտի սփռուի, աւելի պերճաբարբառ չէ՞ քան թէ մենաստանին մէկ անկիւնը գետեղուած մարմարէ կոթող մը:

Այս հրատարակութիւնը Վիեննայի Մխիթարեաննեւրէն սպասելու իրաւունքն ունինք: Վենետիկ շատ ծանրաբեռն է, ու զժուարթութեամբ պիտի կրնայ մէկ տարուան մէջ ամբողջացնել իր յանձնառութիւնները: Վիեննացիները ունին միջազգային մեծ տպարան մը որ իբր ձեռնարկութիւն կը հաստատէ հայ ցեղին գործնական կարողութիւնները. այդ տպարանէն բազմալեզուան հրատարակութիւններ դուրս կ'իլլեն. Վիեննայի Միաբանութեան համար զժուար չէ հրատարակել այդ երկու հատորները որուն խմբագրութեան Վենետիկի վարդապետներն ալ կը մասնակցին անշուշտ:

Թե՛եւ տակաւին Վիեննայի վանքէն Յոբելեանին համար ո՛ր եւ է յայտարարութիւն շտեմանք, բայց կը կարծենք թէ ոչ միայն սրտով պիտի միանան վենետիկցիներուն այլ եւ պիտի՛ երթան Ս. Ղազար միասին բոլորուելու Մխիթարի գերեզմանին շուրջը: Այդ երկու հատորները իրենց յարգանքի տրիտուրը թո՛ղ բլլան:

Մխիթարեանց ճիւղաւորումը ո՛ր եւ է չարիքի պատճառ չեղաւ. ընդհակառակը մեր գպրութեան համար շատ օգուտներ ունեցաւ: Վիեննացիները նոր հարստութիւն ստեղծեցին. Վենետիկէն անջատուածները տարբեր միջավայրի մը մէջ աշխատեցան, իրենց սեփական նոր ուժերով զօրացան: Միևնոյն Ուխտին մեծ ու փոքր մասերը հաւասարապէս յառաջդիմեցին, վասն զի կը տեսնէին թէ հայ ազգին մէջ գործունէութեան ընդարձակ ասպարէզ կայ ամէնուն համար ալ: Չուզեցին իրար կործանելու հետամտիլ, խելացիութիւն շեպեցին իրենց շէնքերը իրարու տան աւերակներովը ամբացնել: Նմանեցան մեծ ընտանիքի մը որուն անդամները երբ շատ կը բազմանան, ճիւղաւորումի մը պէտքը անխուսափելի հարկ կը դառնայ: Ու անոնք որ հայրենի երթիքը կը թողուն, սուրբ կը պահեն իրենց սրտին մէջ անոր յիշատակները. իրենց օձախիւն թշնամին չին. կ'երթան աշխատիլ, աճիլ, զարգանալ, բազմանալ եւ տանը անունին փառքը աւելցնել:

Մխիթարեանց գրական եւ կրթական գործունէութեան երկու հարիւր տարուան պատմութիւնը մեր ընդհանուր կեանքին էական ու անբաժանելի մաս կը կազմէ: Հայ ազգը մէկ տարիէն աւելի ժամանակ ունի իր առջև ընդարձակօրէն ուսումնասիրելու համար երկրորդեան շրջան

մը զոր Յրբելանը իբր օրուան նորութիւնը կը ներկայացնէ: Մաղթենք որ ՉՕրդ գարուն առաջին տարին աւելի ուրախ սրտով տօնենք յիշատակն այն մեծ մարդուն որ ո՛չ նահանգի մը, ո՛չ բաղաբի մը, ո՛չ միաբանութեան մը մարդն է, այլ ամբողջ Հայութեանն է. վասն զի Հայաստանի էս մեծ բարերարներէն մին եղաւ, ու թերեւս Մեծագոյնը, այս երկու գարուս մէջ:

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔԷՆ

Ահաւասիկ Ս. Ղազարու վանքէն հայ ազգին ուղուած հրաւերը զոր Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան իր գողոյճուն ձեռքերովը գրած է:

Հ Ր Ա Ի Է Ր
ՅՈՐԲԵԼԵԱՆ ՀԱՆԴԻՍԻ

Նոր իրդ. դարուս հետ կը սկսի Գ դար Մխիթարեան ուխտիս, զոր երջանիկ Հայր մեր հաստատած է Աստուծոյ և Աստուածամօր ևախախնամութեամբ՝ յ'Ց Սեպտեմբերի 1701 տարւոյ: Փափագելով այս երկուշահարիշարանէայ Յորելիկի յիշատակը՝ ըստ կարի մերոքն և ըստ տկարութեան՝ արժանաշուրապէս կատարել, ի միջոցի լրման և յարման երկու անցեալ դարուց եւ Գիւն, յ'Ց սեպտեմբ, 1901, պարտք երախտագիտութեան համարիմք՝ ոչ միայն ծանոցանել մեր պատուական ազգայնոց, որոց բարոյական օգտին նշարած են Հայր մեր Մխիթար և իր որդիքն՝ իրենց նպատակը, ջանքն ու աշխատանքը, այլ եւ համարձակիմք խնդրել իրենց բարեյօ՛ւար կարել յի նիշարական նպատուք, ի պիտու (ծախոց) պատրաստութեանց հանդիսի և մնայուն Յիշատակաց Յորելիկի, որոյ համար այլեւայլ գրաւոր վայելչագարդ գործք առաջարկուած և սկսուած այլ եւ ի հրատարակութեան, ի պատու Նախահօրս մերոյ եւ ի վայելչս զիւնքն և իր գործը յարգողաց, որոց ընծայարեւոտեան կամ տրբից համեմատ՝ կ'ելնէ իրենց այլ մասն՝ այն հրատարակեալ Յիշատակներէն, և անկարողաց այլ նպատուելո՛ւ մասն ճրի բաշխելիք ինչ:

Երբ յրոտրիւն ազգիս Հայոց՝ յիրս ինչ տարբեր տեսութիւն ունեցեր է և ունի, սակայն, հարկ է խոստովանել, որ գրեթէ առ հասարակ ազնուապէս միարաներ է այս երկերիշարանէայ շրջանին մէջ՝ ի յարգութեան՝ առ Հայր մեր Մխիթար, ձանկեալով զնա մի ի գերագոյն բարեբարաց, երախտաւորաց եւ պարծանաց իշրոց, որոց համաձայն՝ օտարագրիք անգամ տեսողք իր կանգնած եւ կանոնած վանաց եւ վարժից, վկայեն գովութեանը և զարմանօք:

Չենք տարակոշտիք որ այս նոր՝ Երրորդ դարուս ըսկըզբան եւ ընթացից մէջ այլ՝ նորոգե Հայրն Մխիթար իր եռաշնորհ Հոգիւն՝ Աստուածսիրութեան, ընկերսիրութեան և իւստատասիրութեան՝ յՈրդիս իշր, եւ ըլլայ անդադար բարեխօս վասն կզգիս, ճայնակցելով իրեն մեր նախնի երանաշու Ս. Հարց՝ Լուսաւորչաց Հայոց:

Չ Մարտ 1900 Հ. ՂԵՒՈՆԴ Մ. ԱԼԻՇԱՆ

Ս. ՂԱԶԱՐ Նախագահ եւ Գործակալ
Հ. Յուսիկ Վր. ՄԱՆՐԱՍՅ
Ատենապպիւր Հ. Եսայի Տայեցի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայ ազգն, իրեն դարաւոր ցաւերուն մէջ, ունեցեր է թերեւ շատ սփոփիչներ. բայց ոչ միայն գործը եղած է այնչափ փրկարար, այնչափ տեւող, որչափ այն մեծ Սերաստացոյն, որ անուան հետ՝ գործով ալ եղաւ Մխիթար: Ամբողջ երկու հարիւր տարիներ անցան այն օրէն ի վեր, յորում նա հիմը գրաւ՝ կ. Պոլսոյ մէջ՝ իրեն աւունը կրող հաստատութեան, զոր յետոյ բարձրացուց Մեթոնի մէջ, եւ վերջը՝ վենետիոյ Սուրբ Ղազարու կրղղեկին մէջ՝ հրաշակերտեց զայն: Ինքն Մխիթար գծեց այդ հաստատութեան ուղղութիւնը, որով պիտի զիմեր իրեն նպատակին, այն է՝ մտաւոր և բարոյական վերականգնումն եւ զարգացումն ազգին, եւ որուն համար չի խնայեց ինքն ո՛ր և է ճիզն եւ զոհողութիւն: Ո՞վ չգիտեր թէ այդ երկա՛ր շրջանին՝ ս՛րշափ դժուարութիւնք և խաչընդակներ ընդ առաջ ելան Մխիթարայ կանգնած Միաբանութեան, որոնք սակայն չի կրցան կասեցնել կամ խոստորեցնել զայն իրեն ուղղութիւնէն: Ո՞վ չգիտեր թէ նա՛ իրեն Հիմնադրին ուղով ներշնչուած՝ ո՛րքան զրական եւ կրթական ծառայութիւններ մատուց ազգին, մեծ գրագետներ եւ գործիչներ ընծայելով անոր, և ոահահարդ հանդիսանալով լուսաւոր յառաջագիմութեան մը, որուն նշողները ազգիս ամենէն աւելի հեռաւոր և նոյն իսկ իրենց ազգայնութիւնը մոռացող խաւերուն մէջ թափանցեցին: Հա՛րկ է ըսել՝ թէ ինքն եղաւ որ Եւրոպացուց ծանօթացոյց հայ ազգը, իրեն ազնուագոյն տիպարին մէջ, իրեն հին ճոխ զրականութեամբը եւ զարուս նորանսրարուեստից եւ գիտութեանց ձկտող մտքովը, եւ որոնց մէջ գրեթէ արեւմտեայց հաւաստարաքայլ կ'ընթանայ:

Արդ, զալ տարի, 1901ի Սեպտեմբերի 8ին (ըստ Ն. Տի), լրանալով ճիշդ Միաբանութեանս հիմնարկութեան երկհարիշարանէայ շրջանը, անհրաժեշտ պարտք կը համարինք տօնել Հիմնադրիս Մխիթարայ եւ ազգիս Բարեբարին յիշատակը, որուն մեծութեան համեմատ՝ տակաւին արժանաւոր պսակ մը, պարտուպատշաճ յարգանք մը ընծայուած չէ: Յատկապէս այս առթիւ լոյս պիտի

տեսնեն Միաբանութեանս տպարանէն հետեւեալ գործերը:

1. « Հայապատում » գիրք, որ է Հ. Ղ. Ալիշանի հաւաքած Հատուածք պատմութեանց մեր հեղինակաց, ժամանակագրական կարգաւ, մինչև յժէ դար. համառօտ աշխարհաբար ծանօթութեամբք:

2. Լիակատար կենսագրութիւն Մխիթարայ Աբբա-հօր, պատկերազարդ:

3. Մխիթարեան Միաբանութեան 200 ամեայ գործունէութիւնն և նշանաւոր գործիչները, նոյնպէս պատկերազարդ:

4. Համառօտ պատմութիւն Մխիթարոյ վարուց եւ գործերուն, նոյն հանդիսին առթիւ ձրիաբար բաշխելի:

5. Մխիթարայ երեսն Միաբանութեան գործունէութեան պատմութիւնը, գաղղիներէն լեզուով:

6. Պատմութիւն վարուց Մխիթարայ Աբբ. իտալ. լեզուաւ:

7. Հառք ի բանից Մխիթարայ ծառային Աստուծոյ, քաղուած իրեն տպուած և անտիպ գրութիւններէն. նոյնն Անգլիներէն:

8. Պատկերազարդ մեծադիր թերթ մը, կատարուելիք հանդէսին պատկանող. եւ այլն:

Դարձեալ փափագելի է մեզ, թէ և մեր կարողութենէն վեր, ուրիշ մնայուն կոթողով մալ յաւերժացնել մեծ Սեբաստացւոյն յիշատակը, որուն վրայ կարգան հաւասարակէս գրագէտք և ոչ գրագէտք, ազգայինք և օտարք, ներկայք եւ ապագայք, որ փայլեցնէ՝ ոչ լոկ Մխիթարայ մեծութիւնը կամ հանձարը, այլ այն ցեղին՝ որ կրցաւ— եւ կրնայ նոյնպիսի պարագայից մէջ— այսպիսի մեծ ծընունդներ յառաջ բերել:

Անտարակոյս ազգայնոց ազնիւ զգացումները վերաւորած պիտի լինէինք, եթէ ներքին անձուկ շրջանակի մը մէջ ամփոփելով սոյն հանգէսը, զուտ վնասական նկարագիր մը տայինք անոր եւ ոչ ազգային. մինչդեռ ամէն հայ մեզի հաւասար՝ իրաւունք ունի իրենն ըսելու զՄխիթար եւ անով պարծելու: Ուստի այսու կը ծանուցանենք հայ հասարակութեան մեր դիտումները եւ ծրագիրը, որպէս զի անոնք որ կը փափաղին՝ կարենան մասնակցել հանդիսիս և միջոցներ հայթայթել, որով ըստ կարելոյն աւելի հանդիսապէս և արժանաւոր կերպով կատարուի յիշատակը այն մեծ մարդուն, որ Եւրոպացւոց անգամ հիացման եւ յարգանաց առարկայ դարձեր է: Որոնք որ կը ցանկան այս մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ ստանալ կամ ո՛ր և է կերպով աշակցել, կարող են ուղղուիլ այն Յանձնաժողովոյն, որ յատկապէս սոյն հանդիսին համար կազմուած է:

ԿԱՐԳԱՂԻՐ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Յ որ բ լ ե ա ն Հ ա ն Կ ի ս ի

Վ Ե ն Ե տ ի Կ — Ս . Ղ ա զ ա ր

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷԶԵՐ

Ծ Ա Գ Ո Ւ Մ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՒՆ

Երբ վերջերս Լոնտոն Պ. Յակոբեանին այցելեցի, մեր խօսակցութիւնը հայկական խնդրին ծագման զանազան պարագաներուն շուրջ դարձաւ: Հայ դատին հար Անգլիոյ մէջ քսանհինգ տարիէ ի վեր անդադրուած յարատեւութեամբ սիրտ մաշեցնող, միտք հոգնեցնող այդ բազմարդին անձնաւորութիւնը այս առթիւ ինձի տուաւ քանի մը ֆրանսերէն տետրակ, որոնցմէ մին անմիջապէս ուշադրութիւնս գրաւեց: Թարգմանութիւնն էր այն համառու տեղեկազրին որ հիմնաքաղը եղաւ Հայաստանի բարեկարգութեանց խնդրին:

Ազգային ժողովը 1870ին, Խրիմեանի պատրիարքութեանը ընտրած էր Հայաստանի հարստահարութեանց քննիչ յանձնաժողով մը. այդ մարմինը խղճամիտ աշխատութեամբ իր պարտականութիւնը կատարելով յստակորէն ազգին առջեւ պարզած էր Հայաստանի տառապանքները, և մատնանիշ ըրած էր այն վարչական բարեկարգութիւնները որոնց զործարկութիւնը հանգստութեան թուական մը պիտի բանար հայ աշխարհին: Շատնց է կ'ըզձայի այդ տեղեկազրը ձեռքս ունենալ ու պարունակութիւնը ծանօթացնել Նոր-Կեաւեքի ընթերցողներուն. բայց առիթ չունեցայ հայերէն բնագիրը Եւրոպայի մէջ տեսնելու, եւ ֆրանսերէնը գտնելովս ալ ուրախ եղայ, վասն զի ան ալ նպատակիս կը ծառայէ: Առանց յառաջաբանի ուրեմն կը սկսիմ այդ տեղեկազրը ամփոփել. միայն թէ անձնական քանի մը յիշատակներ, չհրատարակուած ինչ ինչ վէպքեր անոնց խառնելու պէտքը կը զգամ:

Վանի առաջնորդ իգնատիոս եպիսկոպոսը Կ. Պոլսոյ պատրիարք ընտրուելէն յետոյ հազիւ աթոռը բազմած երբ յանկարծամահ եղաւ, Օտեան անոր յաջորդ ներկայացուց Խրիմեան Հայրիկը որ Վան կը գտնուէր: Ստորագրած համաբաւարար Ալի փաշան Օտեանի այս խորհուրդը տեղեկանալուն անոր զիտողութիւն կ'ընէ թէ՛ այդ եկեղեցականը « շատ տաք զուլս հայու » համբար կը վայելէ: « Բանաստեղծ մըն է, կը պատասխանէ Օտեան, ես անոր երաշխաւորն եմ: » Հայրիկ ընտրուեցաւ ամբողջ հայութեան ցնձագին խանդավառութեամբ: Նորընտիր պատրիարքը Սատրաղամին իր պաշտօնական առաջին այցելութիւնը տալէն յետոյ Մասիսի մէջ կը հրատարակ-

ուէր թէ Խրիմեան սրբազան իր քաղաքադիտութեան հաւաստիքը տուաւ:» Ու քիչ մը ատեն անցնելէ յետոյ Հայաստանի հարստահարութեանց խնդիրը պաշտօնապէս կը յոգուէր Ազգային ժողովին մէջ:

Այն ատեն ես դեռ զպրոցն էի. ու կը յիշեմ այդ տողը—կամ իմաստը—Մասիսէն գոր կերակի օր մը կը կարգայի վանքին ճեմարանը, երբ զպրոցէն Ս. Ղազար զացեր էինք: Ամէն անգամ վանք երթալուս ես կը վազէի ճեմարանը՝ այսինքն հասարակաց ընթերցարանը ուր դրուած են թերթերը: Այդ հետաքրքրական թիւր կը լափէի, ու ճիշդ այդ յիշատակած տողս հասեր էի երբ չափ բազդէս ներս մտաւ մեծատընիս, Հ. Ալիշան և «ի՛նչ կեցեր ես, զնա՛ ընկերներուդ հետ զբօսանք ըրէ» ըսաւ. մահը սրտիս մէջ Մասիսը ձգեցի: Այդ օրէն ի վերայիս այդ թիւր տեսնելու պատեհութիւնը չունեցայ: Շատ տարի է: Բայց այդ ժամանակին անցուղարձեցումս վրայ տեղեկութիւններ ստացայ այնպիսի անձնատուութիւններ որոնք պատրիարքին եւ Օտեանին մտերիմները եղած էին, եւ շատ անգամ, մանաւանդ այդ թուականներուն, վարչութեանց անդամակցեր: Անոնցմէ լսեցի Խրիմեան Հայրիկի եւ Սատրազամ Ալի փաշայի միջեւ տեղի ունեցած խօսակցութիւն մը, որմէ թելադրուած էր Մասիս վանէն եկող բանաստեղծ—Եպիսկոպոսը քաղաքապէս հոշակել, Օսեանի հրահանգովը:

Ալի փաշայի հետ ունեցած տեսակցութեանը մէջ պատրիարքը ընդարձակօրէն կը նկարագրէ Հայաստանի մէջ հայ ժողովրդին տառապեալ վիճակը. սատրազամը կը խօստանայ այդ ամէնը նկատողութեան առնել: Բայց Հայրիկ կ'աւելցնէ.

— Հիմակ, փաշա, ուրիշ յայտարարութիւն մըն ալ ընեմ: Հայ ժողովրդին վիճակը ծանօթացուցի ձեզի, բայց ահա կ'աւելցնեմ որ իմ ազգս բարեբաստիկ է...

Փաշան ապշած կը նայի, ու Հայրիկ կը շարունակէ քննադատելով մը.

— Իմ ազգս բարեբաստիկ է բաղդատմամբ իսլամներու...

— Ի՛նչ կ'ըսեք, Բաթրիք էֆէնտի:

— Այո՛, փաշա, պաշտօնեաներու լուծը իսլամներուն վրայ աւելի ահեղապէս կը ծանրանայ քան թէ Հայոց: Վասն զի հայերը ունին առաջնորդարան մը որուն կը զիմեն, Պատրիարքարան մը որուն կը բուրքեն, օրագրութիւն մը որ անոնց գանդաւաններուն արձագանքը կ'ըլլայ, ու զեպաններն ալ ի հարկին կը միջամտեն: Հայոց ցաւերուն մէկ մասը կը դարձանուի: Ո՛րք ունին իսլամները իրենց պաշտօնան. ոչ ոք:

Ու Հայոց պատրիարքը սրտաճմլիկ նկարագրութիւն մը կ'ընէ վատթար վարչութեան երեսն իսլամներուն կրած տառապանքներուն:

Պատրիարքին այս մարդասիրական զգացումը, եւ միանգամայն քաղաքագիտական հետաքրքրութիւնը խորին տպաւորութիւն կը թողուն մեծանուն սատրազամին վրայ: Ալի փաշա ոչ թէ խաբելու զիտաւորութեամբ այլ շատ

անկեղծ տրամադրութիւններով, կը խնդրէ պատրիարքէն ընդարձակօրէն զբաւոր իրեն ներկայացնել ինչ որ բերանացի կ'ըսէր. միանգամայն իր սենցած փորձառութեամբ այդ կացութիւնը դարձանելու գործնական միջոցները նշանակել:

Հայրիկ գոհութեամբ կը վերադառնայ իր պաշտօնատունը: Սակայն ինչ որ ուղղակի Պատրիարքարանին եւ Դրան միջև պիտի կարգադրուէր, ահա ազգային շրջանակին մէջ կատարուած խորհրդակցութեանց վրայ Երեսփոխանական ժողովին ատենանը կը բերուի իբր զուտ Հայոց կրած հարստահարութեանց խնդիրը: Դուռը ո՛ր եւ է արգելք չյարուցաներ Հայոց Ազգային ժողովին կողմէն երկրին վարչական գործերուն մէջ այս յանկարծական միջամտութեան դէմ: Ոչ ոք կրնար գուշակել թէ այդ միջամտութեան հետեանքները օր մը մինչեւ ուր պիտի կրնային հասնիլ: Հայկական խնդիրն էր որ կը ստեղծուէր:

Հայոց երեսփոխանութիւնը 1870ի նորաշրջանին 12րդ նստին մէջ որոշեց հարստահարութեանց քննիչ Յանձնաժողով մը կարգել, անոր պաշտօն տալով Աին քննել եւ ցոյց տալ այն բոլոր զեղծութիւնները և հարստահարութիւնները որոնց կը զոհուին Հայաստանի քրիստոնեայ ժողովուրդները, 2րդ իրաց այս վիճակը դարձանելու միջոցները առաջարկել:

Այս շատ փափուկ ու շատ ծանր աշխատութիւնը յանձնուեցաւ ութ անգամէ բազկացեալ Յանձնաժողովի մը, անդամներուն չորսը եկեղեցական, չորսը աշխարհական, ու իրենց պիտի նախագահէր պատրիարքը: Այդ Յանձնաժողովէն հիմակ երկու անգամ միայն տակաւին կ'ապրին: Նախագահը՝ որ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան կոչուեցաւ, եւ Ռուսիոյն Ամբրոսիոս վարդապետը:

Կը կարծեմ թէ գոնէ արդի երիտասարդներուն համար հետաքրքրական պիտի ըլլայ իրենց աչքին առջև ունենալ զիմազծերն անոնց որ հայ կեանքին, հայ պատմութեան համար նոր թուականի մը բացումը կը կատարէին:

Յանձնաժողովին զլուխն էր, իբր ատենապետ, Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան: Երիտասարդ եկեղեցականը որ շատ շանցած պատրիարք պիտի ընտրուէր, թէև Հայաստանը մօտէն չէր ճանչնար, բայց իր պերճախօսութեամբ, զբաւիչ զէմքովը, ծանրաբարոյ երեւոյթովը համակրանք ու յարգանք կը վայելէր. ամէն ոք կատարեալ վստահութիւն ունէր անոր զգացումներուն եւ մտաւոր կարողութեանցը վրայ:

Յետոյ կուգար Սիմոն Եպիսկոպոս Սէֆերեան, Երուսաղէմի պատրիարքական փոխանօրդը և Խրիմեան Հայրիկի ընտրեալ խորհրդականը: Հեզաբարոյ, ձայնը մարած, սակաւախօսիկ, զեղին կլորակ մորուքով երիտասարդ մը որ թէև առանց ուսումի բայց ճարպիկ, գործունեայ, աշխատասէր եկեղեցական մըն էր, խորագէտի համբաւով որուն վկայութիւն կուտային իր պլպլունականողիքը:

Հայաստանը խորապէս ճանչցող եկեղեցականն էր Երեմիա եպիսկոպոսը՝ Բաղէշի, Մուշի, Խարբերգի առաջնորդը։ Հայկական ցեղին նախատիպարը. հայ աշխարհին մէջ հայ կրօնաւորի իսկութիւնը ինքն. մուկ. ոանգ բրիտանեան, բայց հայ բրիտանեան եւ ոչ թէ լոկ բրիտանեան։ Օր մը, այդ 1870 թուականին էր որ Պոլիս գտնուած միջոցին, երբ կը մտնէր Փոխանորդարանը, որ այն ատեն Ղալաթիոյ կից շէնքին մէջ էր, հոն գործի մը համար քանի մը թիւրք մոլլա հաւաքուած տեսնելով, առանց ոչ մէկը բարեւելու կ'երթայ կը նստի թիկնաթոռի մը վրայ. իսլամները կը սկսին զինքը բարեւել. ու եպիսկոպոսը հազիւ թէ կը զիջանի մասնորոն ծայրը քթին տանիլ, իբր փոխադարձ բարեւ։ Հիւրերուն մեկնելէն յետոյ փոխանորդը՝ Մկրեան տէր Յովհաննէս քահանայ, զսպած զայրոյթը պայթեցնելով կը գոչէ.

— Հանեցա՞ր, սրբազան, հանեցա՞ր ըրածիդ։

— Ա՛, ի՞նչ կայ, ի՞նչ է եղեր.

— Ի՞նչ պիտի ըլլայ. տեսա՞ր ինչ գաս տուին բեզի. մարդոց բարև մը շտուիր. անոնք բեզի քաղաքավարի բարեւեցին։

— Ա՛, ի՞նչ է եղեր. ատ էր պակաս որ Հայոց Պատրիարքարանին մէջ մահմետականին բարեւ պիտի տայի, հա՛։

Ուսումը որ նախնական հայեւորէ մը անդին չէր անցնէր, ստացած էր վան։ Չեղբը իր կլոր փորին վրայ ժուռ ածելով երբեմն հպարտօրէն կը պանծար թէ «կտուց Անապատը Որդի Աստուծոյ եմ լուծեր ես», այսինքն թէ՛ Նարեկին Որդի Աստուծոյն բերականօրէն վերլուծած է, ինչ որ գիտութեան բարձրագոյն աստիճանին ժամանում կը նշանակէ։

Չորրորդ եկեղեցականն էր Բերայի քարոզիչ Ռուբինեան Ամբրոսիոս վարդապետը։ Աշխոյժ երիտասարդ մըն էր, խօսելու կարողութեամբ օժտուած. բայց իր անհատական կեանքին մէջ մեծ պակասութիւններ գործելով վարկաբեկ եղաւ. յետոյ 1879ին կովկաս այցելեց ու 2,000 ոսկի հաւաքեց Բաբերդ երկրագործական վարժարան մը հաստատելու նպատակաւ, բայց երբեք չիրագործեց այս ծրագիրը. ուստի հայ ազգին համար ոչնչացաւ։

Աշխարհականներու կարգին մէջ էր նախ հանդուցեալ Գարակէօզեան կարապետը. հիմնադիր Գարակէօզեան կը տակին։ Այս երիտասարդը սեղանաւորական եւ առեւտրական գործերու համար առաջնակարգ յատկութիւններով օժտուած էր. առանց վաղահաս մահուանը թիւրքացիոյ հրապարակին վրայ շատ մեծ տեղ մը պիտի գրաւէր։ Միևնոյն ատեն ազգային գործերուն մէջ ալ առաջնակարգ դեր մը կատարելու սահմանուած էր։ Ազգասիրական եռանդ ունէր. զայն մօտէն ճանչցողներ անոր ըզգացումներուն ազնուութիւնը զրուատած են։ Ազգային ժողովը իր երրորդ ատենապետը ընտրեց այդ վաճառականը։

Սահմանադրութեան հաստատուելէն յետոյ Պոլսոյ

հայ վաճառականներուն համար ժողովրդականութեան թուական մը բացուեցաւ, ու ատեն մըն ալ շարունակեց։ Ազգը Ամիրաններուն լուծէն ազատուելէն յետոյ Դրան հայ պաշտօնատարներուն ձեռքն էր ինկած, եւ անոնց նկատմամբ ալ մեծ հակակրօնութիւն կը տիրէր, ո՞մանց համար իրաւի, ո՞մանց համար յանիրաւի։ Փափազեան Ազգային ժողովին մէջ կտրուկ բանաձեւով մը կը սահմանէր Ամիրաններուն եւ Էֆէնտիներուն միջեւ եղած տարբերութիւնը։ «Թիւրք փաշաները, կ'ըսէր, հայ Ամիրաններուն ափը կը նայէին, հայ Էֆէնտիները թիւրք փաշաներուն ափը։» Ըսել կուզէր թէ Ամիրանները փաշաներուն սեղանաւորները ըլլալով, իրենք էին որ թիւրքերը իրենց ազդեցութեան ներքեւ կը պահէին դրամի զօրութեամբ. իսկ հայ Էֆէնտիները իրենց ապրուստը Դանէն ստանալով պարտաւոր էին խոնարհիլ փաշաներու կամքին առջեւ։ Ազգը շուտեալ վիճակի մէջ էր եւ վստահելի յենարաններ կը փնտռէր. աչքը զարձուց Պոլսոյ վաճառականներուն վրայ։ Ասոնց պզտիկ մէկ մասը միայն երկարատեմէ ի վեր առեւտրական դիրք մը ստեղծած էին իրենց համար. իսկ մեծ մասը գեռ քանի մը տարի առաջ գրեթէ մանրավաճառներ էին։ Ոմանք Խորիմի, սերիշներ Ամերիկայի պատերազմներէն օգտուելով հարստացած. ուրիշներ աշխատութեամբ կամ զանազան պարագաներով իրենց համար լաւ վիճակ մը ստեղծած էին։ Ազգը այս նոր ստեղծուած դասակարգին վրայ սկսած էր յայտնար գնել, զանոնք նկատելով թիւրք իշխանութեանէն բաւրօղին անկախ, եւ բաւական ալ զարգացած։ Ուստի հայ վաճառականներուն առաջնակարգ տեղ մը տրուեցաւ ազգային գործերու վարչութեան մէջ։ Կարապետ Գարակէօզեան իբր առաջնակարգ վաճառական մը, եւ միանպամայն խելացի մարդ, անպամ ընտրուեցաւ այդ համաբաւար Յանձնաժողովին։

Դրան ծառայութեան մէջ գանուող հայերէն բնականաբար ոչ ոք այդ Յանձնաժողովին անդամակցութեան կրնար հրաւիրուիլ։ Առեւտրական դասէն մէկ ներկայացուցիչ բաւական համարուած էր. իսկ աշխարհական միւս երեք անդամները եկեղեցականներու պէս զուտ ազգային կեանքով ապրողներ էին։

Ասոնցմէ մէկն էր Օզսէն Խօճասարեան, Օրագիր թերթին տէրն ու խմբագիրը։ Ռամկավարական Սամաթիացի մը, շափաւոր ուսում ստացած, բայց զիւրութեամբ գրելու կարող, իր յօդուածները թէ՛ն գեղեցիկ գրականութեան մը զրօշմը չէին կրեր բայց ժողովուրդը ընդհանուր կերպով կ'ախորժէր անոնցմէ։ Խօճասարեան «տրամադրող» մտքի մը եւ «յանդուգն» գրչի մը համբաւը կը վայելէր։ Հանրային կեանքի կռիւններու մէջ օրը օրին հապճեպով հրապարակ նետուած յօդուածներուն տրամաբանական յատկութիւնը գնահատել զժուար է։ Օրագրական յօդուած մը միշտ տրամաբանական կը համարուի խումբ մը մարդոց համար, եւ անտրամաբանական՝ հակակողմններու տեսակէտէն դատելով։ Ժամանակը միայն կը հաստատէ ճշմարիտ արժանիքը, բայց այլ ես ո՞վ

կը յիշէ այդ անհետացած աճառի փրփուրները: Իսկ յանդերձութիւնը յիշատակներ կը թողու, և անոնք ատեն մը քանդակուած կը մնան ժամանակակիցներու մտքին մէջ: Խօսմասարեանի այդ կարգի դուրսններէն մէկ քանին չեմ ժողացած: Միայն թէ Օրագիր, և անոր յաջորդող Նորագիրն ու Նոր-Դարը յանդուզն կը համարուէին բաղդատմամբ Մասիսի կամ նման ուրիշ թերթերու. բայց երբ հնար է առանց արգելքի, և առանց մեծ վտանգի մը հաւանականութեան ամէն բան ըսել, « յանդուզն » ածականը իր բուն իմաստը կը կորսնցնէ: Խօսմասարեանին տրուած անթողը կը հաստատէ թէ հարստահարութեանց խնդիրներուն մէջ ձեռնհաս և կարող կը համարուէր:

Մնացեալ աշխարհական երկու անդամներն էին՝ Քրիստոստոր Ղազարոսեան և Ստեփան Փափազեան: Այս երկու անունները հետզհետէ աւելի իրարու շղթայուած մնացին, և ազգին մէկ մեծ մասին մէջ, Պոլիս, աւելի հակարանք ազդած են քան թէ համակրանք: Յատկապէս Փափազեանին դէմ ես ալ կոռուող մը եղած եմ, բայց կ'ընդունիմ թէ ազգին մատուցած իրենց ծառայութիւնները ոչ միայն չգնահատուեցան այլ և անտես ալ եղան: Մեծ թշնամութիւնը Փափազեանի դէմ էր: Շատ եռանդոտ ու նակ շատ կրքոտ արիւնուն էր: Իր տեսութիւնները լըստակորէն պարզելու և իր գաղափարները ազգին մէջ թափանցել տալու շափ ծանրախոհ և պաղարին չզրտնուեցաւ, ուստի և իր բոլոր ձեռնարկները ինչպէս և անարանութիւնները անբացատրելի կը մնային, մտքերու մէջ շփոթութիւն ձգելով: Մարտնչեցաւ ընդդէմ Խորիմեանի ու Ներսէսի նման ժողովրդական պատրիարքներու, որոնց առաջինին տապալմանը, ու երկրորդին՝ տկարացմանը շատ ծառայեց իր ճարտարութեամբը: Այդ երկու պատրիարքներուն շերմ պաշտպանները աններող զրտնուեցան Փափազեանի: Հիմակ այդ անցեալին ուսումնասիրութեան տեղը չէ հոս. բայց կարծեմ թէ Խորիմեանին տապալումը շատ վնասակար եղաւ ազգին, ու մեր պատմութիւնը տարբեր ընթացքի մը կը հետևէր եթէ 1877-78ի ուսեկութիւնը պատերազմին ատեն Խորիմեանի նման Հայաստանը ճանչցող պատրիարք մը ունեցած ըլլայինք:

Քրիստոստոր Ղազարոսեան սակերիչ մըն էր, ուղղամիտ, ազգատ, կարմիր ուսմակալարական, ժողովրդական իրաւունքներուն շերմ ախոյեան, Սահմանադրութեան և Ազգային ժողովին համար հոգի տուող և ո՛ր և է օրինազանցութեան աններող: Ու եզական դէմք մը Հայաստանի կրթութեան գործին մէջ: Այդ ծերունին կեանքին մէկ մասը, հայ պանդուխտներուն կրթութեանը նուիրեց: Ամէն կիրակի, օրը ինչ որ ալ ըլլար, Քրիստոստոր Ղազարոսեան Ղալաթիոյ վարժարանն էր. հոն կարդալ, գրել, հաշուել, թուաբանութիւն և մինչեւ իսկ բարոյական իմաստասիրութիւն կը սորվցնէր հարիւրաւոր հայ պանդուխտներու: Աւելի քան երեսուն տարի անընդհատ շարունակութեամբ այս մեծ աշխատութիւնը կատարեց այդ պատուական մարզը, որուն յիշատակը անմոռաց պիտի

տի պահենք. զի ազգին մեծ երախտաւոր մըն է:

Ստեփան Փափազեան 1870ին զեռ իր առջեւ հակառակութեան հոռանք մը չէր տեսած: Մուշէն երեսփոխան ընտրուած էր, ազգային առանձնաշնորհմանց շերմ պաշտպան կը հանդիսանար, և պաշտպան մնաց միշտ, ու միանգամայն Դրան էֆէնտիներուն էն զօրեղ հակառակորդը:

Ահա անոնք որ հայ տառապանքներէն յանուն հայ ազգին հայկական խնդիր մը պիտի ստեղծէին: Հայաստանի համար քանի մը տարրական բարեկարգութեանց ըղձանքները մինչեւ Հայաստանի ինքնավարութեան պահանջութիւն բարձրանալով, ամբողջ Հայութեան ազգային ծրագիրը պիտի ներկայացնէին: Գաղափարը Ղալաթիոյ մեր եկեղեցիէն զուրս սպրդելով մինչեւ Եւրոպա, մինչեւ Ամերիկա պիտի սաւառնէր, արինազանգ թեւերով: Երեքը այդ Յանձնաժողովին անգամներէն՝ Խորիմեան Հայրիկ, Վարժապետեան Ներսէս, Փափազեան Ստեփան Ազգային ծրագրին իրականացման պիտի աշխատէին ու թտարի յետոյ, բայց առանց յաջողութեան. կամ աւելի ճիշդը՝ առանց անմիջական յաջողութիւնը տեսնելու բաղգաւորութեան: Բայց իրենց հաւատքը փոխանցեցին նոր սերունդին: Ազգ մը նախ իր ճակատագրին վրայ անպարտելի հաւատք պէտք է ունենայ որ ապրի:

Հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովը 1870 զեկտեմբեր 14ին գումարուեցաւ. ու նստերու հրաւիրագրերն ալ իմ գրչովս հաղորդուեցան: Վենետիկէն նոր դերագրած էի, և քանի մը ամիս Պատրիարքարանին Ղալաթիոյ ճիւղը անցուցի: Այդ կարճատեւ ժամանակամիջոցը օգտակար եղաւ իմ ապագայ հրապարակագրի կեանքիս համար: Այն բոլոր անձնաւորութիւնները որոնք երեսուն տարիէ ի վեր մեր հանրային կեանքին մէջ առաջնակարգ կամ երկրորդական դեր մը կատարելով հետզհետէ կ'աներևութանան, անոնք մեծ մասամբ մօտէն տեսնելու, ճանչնալու առիթը ունեցայ. իրենց խօսքերը լսեցի, իրենց վարմունքը տեսայ, տպաւորութիւնը մտքիս վրայ անջնջելի մնաց: Պաշտօնս մեծ բան մը չէր. պարզ նամակներ գրել և կամ օրինակել. այդ առթիւ է որ հրաւիրագիրները գրեցի:

Կ. Պոլսոյ Ազգային պաշտօնական կեանքը այդ միջոցին կեղրոնացած էր Ղալաթիոյ եկեղեցին. Գում Գաբուի Պատրիարքարանը գրեթէ լքուած էր, երթեկութեանց զժուարթութիւններուն պատճառաւ: Փոխանորդարանը, Դիւանատունը, անցագրատունը, ամէնքն ալ Ղալաթիոյ Եկեղեցիին շրջափակին մէջ էին: Հոն կը գումարուէին կրօնական և քաղաքական ժողովները, տեսուչ խորհուրդները, բոլոր յանձնաժողովները: Ազգային ժողովը շաբաթը կամ երկու շաբաթը մէկ կը գումարուէր: Հոն կը լեցուէին Հայաստանէն եկող ամէն տառապեալները, հոն կը վազէին Պոլսոյ ամէն թաղերէն Պատրիարքարանին հետ գործ ունեցողները: Երուն, զեռուն, տեսնող կեանք մը կար: Ու այդ կեանքը կը խտանար, կը սղմուէր պզտիկ, հինաւորց շէնքի մը մէջ: Հոն ուր հի-

մակ կեցողական վարժարան մը կը բարձրանայ, շը-
նորհիւ Ստեփան Փսփսզեանի գործնական խելքին եւ
տոկուն աշխատութեանցը, հոն 1870ին տեսակ մը քար-
այր կը բացուէր իր վրայ կրելով ամբակառոյց բայց միջ-
նագարեան յարկ մը: Եկեղեցիին փակէն քանի մը աս-
տիճան իջնալով կը տեսնէինք ուրիշ պզտիկ փակ մը
ուր խշտիներու վրայ կը տարածուէին Հայաստանէն ե-
կող խեղճ ընտանիքներ, մինչեւ որ տեղ մը ճարկին,
կամ շոգենաւով ծրուր փոխադրուէին: Աջ կողմէն փայ-
տէ խրխլակ սանդուխ մը կը տանէր վերի յարկը, միակը:
Տախտակ պատերով շինուած խուց մը իբր Դիւանատուն
կը ծառայէր: Ու ճակատը չափաւոր լայնութեամբ եր-
կու մեծ սենեակներ կային. դռները երկաթէ, վանդակ-
ները երկաթէ, ձեղունները կամարակապ: Միջնագարեան
չէնք մը, արտաքին յարձակումներէ պատսպարուելիք յա-
տակազծով շինուած: Այդ սենեակներէն մէկը փխանոր-
դարան էր. միւսը՝ որ կանանչ գորգով ծածկուած պարզ
փայտէ սեղան մը կը պարունակէր, շուրջը քսանի չափ
թիկնաթոռ, յատկացուած էր զանազան ժողովներու գու-
մարման: Ու դեռ աչքիս առջեւ կը տեսնեմ երիտասարդ
Փափազեանը, այդ սեղանին զլուխը անցած և առջևը հին
տետրակներու դէզ մը: Հայաստանի մօտաւորապէս քսան
տարուան տառապանքներուն վիճակագրական պատմու-
թիւնը այդ տետրակներուն մէջ էր, պաշտօնական թուղ-
թերով: Թիւրքերէնի դիւանադպրին օգնութեամբ կը
կարդար Պատրիարքարանէն քսան տարուան մէջ Դուռը
դրուած բոլոր թաղերները, անոնց տրուած պատաս-
խանները. ամէն ինչ կը քննէր, կը բաղդատէր: Եւ ծանր
աշխատութեամբ պատրաստեց յստակ, որոշ, աներկայելի
իրազութեանց, թուանշաններու վրայ հիմնուած տեղեկա-
գիր մը որ հարստահարութեանց քննիչ մարմինն ուղեցոյցը
եղաւ, յետոյ Երեսփոխանութեան առաջնորդեց, եւ անկէ
բղխաւ Հայկական խնդիրը:

Յաջորդ թիւէն կը սկսինք ամփոփել այդ յիշատակա-
րանը որ թէև հին, բայց դեռ օրուան նորութիւնն է, երբ
Հայաստանի բարեկարգութեանց հարցը մեզի յուզող
կենսական մեծ խնդիրն է:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Հետեւեալ նամակը գեղացի աղջկան մը իր եղբօրը
գրածն է: Արուեստ չի կայ մէջը. հրատարակութեան սահ-
մաուած չէր: Ու մեծ բան մըն ալ չպարունակեր, ո՛չ կո-
տորած, ո՛չ աւերում, ո՛չ թալան կը նկարագրէ. ու կար-
դացողին սիրտը կը ճմլէ պզտիկ որրի մը լացին պէս:
Մարդիկ կ'իյնան կը մեռնին անօթի. ու նամակ գրողը
սոսկում չի զգար այդ դէպքերէն: Ա՛լ տրվեցան. դժբաղ-

դութեանց անգաղբու շարունակութիւնը արցունքը կը
չորցնէ: Սովաժա՛ մեռնիլը այլ եւս բնական երևոյթ մը
կ'երբի: Ոչ ոք կը զարմանայ երբ տերևներ մէկիկ մէկիկ
կը շորնան, կը թափին, կ'իյնան աշնան: Ու քանի հա-
զարներով են այս վերաւոր տատրակներու վուլուները. Հա-
յաստանէն բերող թուղթերը: Ո՞վ կրնայ գիտնալ:

... 23 Մարտ 1900

ՍԻՐԵՂԻ ԵՂԲԱՅԲ

Կարօտակէզ բարեներուս հետ միասին կը յայտնեմ
իմ և ձօրս սրտազին շնորհակալութիւնները ձեր այն բա-
րեսրտութեան, մարդավարութեան և քաղաքավարութեան
առթիւ, որ ցուցուցած էիք ասկից զո՞ք թէ երկու ամիս
առաջ ՚՛ մէծիտ դրկելով մեզ. ստանալով զայն՝ ամենայն
շնորհակալութեամբ օրհնեցինք եւ հանապազ օրհնող եմք
ձեր անդին և ցանկալի կեանքը. միշտ կաղօթենք երկնա-
հանդոյն սուրբ տաճարին մէջ ամենօրհեալ Տիրամայր
կուսին առջև, խնդրելով ձեզ երկար օրեր, անփորձութիւն
և գործոցք բարի յաջողութիւն:

Սիրելի եղբայր, ճշմարիտ կ'ըսեմ որ, այն ՚՛ մէծիտը
մեզ մեծ մարդկութեան անցաւ, եւ շատ օգնեց մեզ. եթէ
չըրկելու լինէիր, անթիւ նեղութիւն պիտի կրէինք. սա-
կայն սուրբ Սարգսի նման հասաւ, ցայ՛տ անով կ'ապ-
րիմք: Մեք բնաւ անակնկալ էինք այդ մասին, այլ միայն
կաղօթէինք միշտ եւ օգնութիւն կը խնդրէինք Տիրածին
կուսէն, օրհնեալ լինի իւր կամքը, անմիջապէս ձեր միջո-
ցաւ հասաւ օգնութեան՝ եւ զմեզ մեծապէս յուսադրեց եւ
մխիթարեց:

Ազնիւ եղբայր իմ սիրելի, ձեր զրկած ՚՛ մէծիտին
հետ միասին սիրելի հօրեղբայրս ալ երեք ոսկի գարունը
մեզ զրկելու համար խօսք տալով զմեզ յուսադրած էր, ու-
րով անհունապէս ուրախ եղանք եւ շնորհակալութեամբ
օրհնեցինք զինքն, և որոնք ալ որ լսեցին խիստ դովեցին
զայն եւ զձեզ, որ մէկը անմիջապէս ՚՛ մէծիտ կուղարկէք,
միւսը ալ կը խոստանաք գարունը հացի լմնցած նեղ ա-
տենին մէջ երեք սփի զրկել, այս մասին անհուն շնոր-
հակալութիւններս կը յայտնեմք եւ և մայրս ձեզ եւ անոր,
որ այդ անկշիռ սէրը եւ զթութիւնը ցոյց տուիք մեզ այս-
պիսի անձուկ միջոցի մը մէջ, այսպիսի նեղ եւ տաղնա-
պելի ժամանակի մը մէջ՝ կաղաչեմք եւ կը պաղատիմք
հօրեղբօրս եթէ կարելի է իւր ազնիւ բարեսրտութեամբը
հաճի ՚՛ ոսկի զրկել, վասն զի անթիւ նեղութիւն ունիմք,
որովհետև թէ պարտատէրներուն պիտի տամք որ ցրեմ ան
առած եմք, եւ խիստ կը նեղեն զմեզ, եւ թէ նորէն ցր-
եան պիտի առնեմք թէ ցանելու և թէ ուտելու համար:
Առաւօտ երբ կը լուսնայ երկու պզտիկները իրենց տղա-
յական շեղուով ամենէն առաջ հացի՛կ, հացի՛կ կը կան-
չեն: Ի՞նչ պէս պիտի դիմանայ թշուառ մայր մը եւ ան-
բաղդ քոյր մը այդ եղկելի ձայնին եւ չըթան իրենց սի-

րելիններուն. սակայն ինչո՞վ, երբ ամպարը ալիւր չլինի հասպատը հաց, քսակը ստակ չլինի, ապառիկ կամ ձրի ալ տուող. ի՞նչ ընէ այդ անբախտ ու թշուառ մայրը. ահա քեզ վիճակ մը, ահա՛ քեզ կեանք մը. ա՛խ սեւ օրեր սեւ օր, ա՛խ չար օրեր, չար օրեր, ահա՛ այս է մեր դրեթէ մեծամասնութեան վիճակ:

Մերելի եղբայր, ես արտասուքով կը գրեմ, ա՛լ չըրտեմ թէ գուք ինչպէ՞ս պիտի կարդաք այս ցաւալից տողերը. հարիւրին, շաա աղէկ կը լինի որ ըսեմ հաղարին մէկը չգրեցի, ձեր ազնիւ ու փափուկ սիրտը չսւգեցի ճըմլեցունել անոր համար համառօտ ծանուցում մը ըրի, միմիայն գաղափար մը ունենալու համար մեր եւ թշուառ ժողովրդի վիճակին վրայ:

Մեր գրացնին՝ Տ... չորս տարեկան տղան, հացի՛կ հացի՛կ ըսելով հոգին կաւանդէ, խղճուկ ժամկոչ քաւորս գրեթէ հաց ըսելով հոգին կ'աւանդէ. Ե. Գ. հացի համար Ս. ...ի քով կը խեղդուի, ոչ թէ բուքէն այլ անօթութենէն կը մեռնի, թողում ... եւայն տեղերու կամ գիւղերու անօթութենէ չափազանց մեռեալներն. հիմա կը տեսնա՞ս թէ ի՞նչ սեւ օրեր եւ չար օրեր են այս օրեր:

Կաղաչեմ սիրելի եղբայր, եւ կրկին կաղաչեմ, որ այսպիտի նեղ եւ անձուկ ժամանակի մը մէջ չմոռնաք զմեզ. ձեր սուրբ սիրոյն չմերժէք զմեզ. գուք եւ իմ ազնուասիրտ սիրելի հօրեղբայրս, երկուքիդ ալ խնամակալ ձեռքերը եւ ստից գարշապարը համբուրելով, լի յուսով մնամ աղօթիւք սպասու նամակիս պատասխանացն անհամբեր թշուառ եւ անբաղդ ողբացեալ քոյրդ . . .

Յ. Գ.

Թշուառ մայրս իւր անթիւ սիրոյ բարեւները ձեր սիրելութեան տալով՝ մարդասէր ճակատդ եւ երկու երեսդ կը համբուրէ. քոյրս եւ եղբայրներս ինձ հետ միասին իրենց ջերաջերմ համբոյրներն կը մատուցանենք առատաբաշխ ձեռքերուդ անթիւ եւ անհամար փափազներով ու բարեւներով միասին:

Նոյն



Վանէն կը տեղեկացնեն թէ վասպուրական իսլամացող հայերը ոչ թէ չորս հարիւր հոգի են, այլ չորս հարիւր ընտանիք: Հայաստան ընտանիք մը բազմաթիւ անդամներէ կը բաղկանայ, հետեաբար աղէտին ծանրութիւնը կարծուածէն աւելի ըլլալու է. չենք սխալիր եթէ, այդ լուրին վրայ հիմնուելով, իսլամացող հայոց թիւը էն քիչը երկու կամ երեք հազար ենթադրենք: Անօթութիւնը օր գայլը լեռներէն վար կ'իջեցնէ ու ամէն վտանգի կենթարթարկէ, նաև գառնուկն ալ իր փարախէն դուրս կը քշէ: Սովն է որ այդ խեղճ հայերը իրենց Եկեղեցիին փարախէն, իրենց ազգին գրկէն կը հեռացնէ: Այդ հաւատարացութեան համար Լոստոնի մամուլին հետեալը կը հեռագրուի: «Այդ Հայերը կը բռնադատուէին կա՛մ զինուորական տուրքէ պարտքերնին ամբողջապէս վճարել,

կամ իսլամանալ: Եւ որովհետև արդէն անօթութենէ կը տանջուէին, ուստի ուրիշ ճար չունէին բայց եթէ իսլամութիւնը ընդունիլ:»

Մեծ գժբաղդութիւն հայ ազգին համար, եւ դեռ մեծագոյն չարիքներու վախը կրնանք ունենալ. Հայ գեղէ մը զրկուած նամակը զոր կը հրատարակենք վերելք, մտաւոր գաղափար մը կրնայ տալ Հայաստան տիրող կացութեան վրայ. հինգ մէճիտը հարստութիւն մը կը համարուի, ու երեք չորս ոսկին կը փրկէ ամբողջ ընտանիք մը. եւ սակայն ո՞ր է: Ու մտածենք որ այդ գեղը կրնայ նուազ գժբաղդներուն մէջ դասուիլ, վասն զի հեռու է այն կեդրոնէն ուր թրքական ճնշումը իր բոլոր ուժովը կը ծանրանայ Հայոց վրայ: Հայաստանի արդի աղքատութեան որքանութիւնը ըմբռնելու համար յիշենք թէ ատեն մը մեր երկիրը ապրուստի ինչ ինչ միջոցներ ունէր. գրեթէ ամէն տունէ Պոլիս պանդուխտ մը կը գտնուէր. անիկա ամէն տարի իր ընտանիքին քանի մը ոսկի կրնար հասցընել. Պոլիս 6,000 Հայաստանցիի կոտորածը և մեացեալներուն խուռներամ արտաքսումը ամբողջ հայ աշխարհը զրկեց պոլսական եկամուտէն. դիւրին է ուրեմն մտաւրերել թէ հիմակ ինչ կրնայ ըլլալ հայուն նիւթական վիճակը Հայաստան:

Երբ թիւրք իշխանութիւնը քանի մը փշրանքներն ալ կուզէ խել սովամահ կորնչելու վտանգին մէջ գտնուող Հայոց բերնէն, ու այդ տարաբաղդ հայերը կուրանան կրօնքնին և կ'անջատուին իրենց ազգէն, մենք թշուառութեան ու բռնաբարութեան այդ տեսարանին առջեւ աւելի վիշտ պէտք է զգանք քան թէ զայրոյթ: Մեր սրտերը կարեկցութեամբ կ'ողողուին եւ ոչ թէ ցասումի գառնութեամբ: Սովալուկ անօթին իր ազատ կամքին տէրը չէ, վասն զի իր խելքին տէրը չէ, տեսակ մը անբանացեալ խելագար է: Սովի ատեն մայրը իր զաւակը կուտէ: Խեղախորոյսներէն չենք կրնար մարտիրոսացման դիցազնութիւնը պահանջել: Հիմակ երբ պատտա մը հաց կը թողուի իրենց, անշուշտ այդ տարաբաղդները խղճահարութեամբ կը տազնապին: Աճոնց և նմաններուն փրկութիւնը մտածենք: Զայրոյթի պոթկուովը շատ դիւրին ազգասիրութիւն է:

Մինչ թիւրք կառավարութիւնը վանի նահանգին մէկ կողմը հայ ժողովուրդը հաւատարացութեան կը բռնազատէ անօթութեան ճնշումին ներքեւ, միւս կողմերն ալ ահ ու սարսափ տարածելով հայը իր երկրէն փախուստի կը պարտաւորէ: Անգլիական թերթերը կը հաղորդեն թէ Ալաշկերտ ու Պայազիտ իրենց շրջականերովը զարհուրելի վիճակի մատնուած են: Քիւրտերը նորէն վեց հայ ըսպանած ըլլալով բոլոր գեղացիները խուճապական տագնապով կովկաս կը փախչին, ընդհանուր կոտորածի վախէն:

Յիսուն թիւրք զինուորի ջոկատ մը գրաւեր է Իւլ-Քիլիսի համբաւաւոր Ս. Յովհաննէսի վանքը, ուրկից զուրս վանտեր են վարդապետ, քահանայ, կրօնաւոր, ամէնքն ալ: «Գեղացիներու սպանումը, կը հեռագրուի

Հոնտոնի մամուլին, յաճախագէպ պատահար է, բայց այսպիսի վանքի մը գրաւումը շատ ծանր գործ մըն է որուն հետեւանքները կրնան վտանգաւոր ըլլալ:»

* *

« Հայաստանի Բարեկամներ » ու ընկերութիւնը (նախագահ՝ Լէտի Ֆրէտէրիք Գէլլընտիշ), հակառակ ներկայ աննպաստ պայմաններուն՝ բոլոր ջանքովը կ'ոգորի իր նպաստի գործը շարունակելու եւ անոր շուրջը համակրանք ու հոգածութիւն անմեռ պահելու Անգլիոյ մէջ: Ընկերութիւնը, որ մերթ ընդ մերթ թերթեր լոյս կ'ընծայէ՝ Հայաստանի զանազան կողմերէն իրեն հասած տեղեկութիւնները ամփոփելով եւ գաղափար մը տալով իր նպաստած որբանոցներուն եւ արհեստանոցներուն կացութեան մասին, իր վերջին հրատարակութեան մէջ նոր կոչ մը կ'ուղղէ Անգլիոյ հասարակութեան: Ճէյմս Պրայս, այդ նպատակու ընկերութեան նախագահին ուղղած մէկ նամակին մէջ կ'ըսէ.

« . . . Կիները եւ տղաքը մանաւանդ շատ տեղ խոր թշուառութեան մէջ են: Հայ ցեղէն նուազ տոկոսնութիւն ունեցող ո եւ է ցեղ բոլորովին պիտի կորսուէր այսպիսի հարուածներու տակ:»

Մեծանուն հայաւերը կը բաղձայ միանգամայն որ կրթական հաստատութեանց ալ նպաստ հասցուի: Նիւթական պէտքերուն չափ, «լաւագոյն բանը որ կրնանք ընել, կ'ըսէ, այդ ահեղօրէն զարնուած ժողովրդին համար, իրենց օգնելն է պահպանելու ուսման եւ իմացականութեան մակարդակը, և տառագողները սրտապնդել՝ անոնց զգացնելով թէ հակառակ եւրոպական պետութեանց խաբէութեանը՝ որոնք 1878ին յանձն առած էին պաշտպանել զիրենք, Եւրոպայի և Միացեալ-Նահանգներուն մէջ շատ սրտեր կան տակաւին որոնք իրենց հետ են իրենց աղէտներուն մէջ, եւ որոնք կը սքանչանան այն յարատեւութեանը եւ արութեանը վրայ որով կրցան այնքան մարտիրոս աւելցնել տասնըութ զարէ ի վեր իրենց հաւատքը իրենց կեանքովը կնքած քրիստոնեաներուն փառայելու ցանկին:»

* *

Հայաստանէն առնուած տեղեկութեանց մէջ, զլսաւորները վանէն են, Տր. Բէյնոլտզէ, որ տխուր պատկեր մը կը դժէ տիրող թշուառութեան մասին: «Կը յուսայի այս տարուան հունձեր բաւական պիտի ըլլար որ ժողովուրդը ազատէր ուրիշին օգնութեան կարօտ մնալէ, բացի որբերէն և որբուարիներէն: Այդպէս չեղաւ սակայն, ու ատոր զլսաւոր պատճառը անձրևի պակասն է: Այդ անձրևի պակասն զգացուցաւ տարի մը առաջ, երբոր ակընկալուած աշնանային անձրևնուն բացակայութեան պատճառաւ՝ ցանուած սերմերուն շատը հողին մէջ մնացին մինչև գարուն՝ առանց ծլելու: Ամբողջ ձմեռն ալ այդպէս

տեւեց, ու այնչափ քիչ ձիւն տեղաց որ գետերը, առունները եւ աղբիւրները իրենց սովորական պաշարը չստացան: Գարնան, բարեկամներու առատաձեռնութեան շնորհիւ, սովորականէն շատ աւելի բնդարձակ տարածութիւններու վրայ սերմնցաւ եղաւ անցեալ գարնան, ու թէպէտ սկիզբները անձրեւը քիչ մը պակաս էր, արտերը շատ մեծ յոյս կը ներշնչէին մինչեւ յունիս, եւ եթէ մէկ լաւ անձրեւ մըն ալ գալու ըլլար՝ հունձքը այնպէս առատ պիտի ըլլար որ գոնէ երկու տարուան համար պիտի բաւէր ժողովրդին: Բայց այդ անձրեւը չեկաւ, ու արտերը սկսան չորնալ: Ասկից զատ, գետակներուն ու առուններուն ջուրն ալ այնքան պակաս էր որ սովորական սնողման կէսը անգամ տեղի չունեցաւ: Այսպէս ակնկալուած առատութեան տեղ, ահա նորէն կարօտութիւնն է որ մեր դուռը ափ կ'առնէ: Պետական բարեկամ պաշտօնեայ մը ինծի եկաւ եւ իր կողմէն եւ մեր բարի կուսակալին կողմէն թախանձեց որ այս կացութիւնը հրապարակեմ անյապաղ: Ինծի կը հաւատէ թէ նահանգին մէջ արտադրուած արմտիքը հազիւ ութ ինը ամիս բաւէ ամբողջ բնակիչներուն: Տարակուսական է թէ անցեալ տարուրնէ պէտք եղածին չափ արմտիք կը մնայ այս բացը գոցելու: Բայց կացութեան էն ծանր կողմը աս չէ: Նոյն իսկ եթէ պաշարը ամբողջ նահանգին բաւէր, սա իրաւ է թէ այնչափ անհաւասար կերպով բաժնուած է որ հայ ժողովրդին մեծամասնութիւնը զուրկ կը մնայ իր բաժինէն: Անոնց մեծ մասը տարին ոխան ոչնչով, ու ըստիպուած էին իրր մշակ աշխատել կամ մուրալ: Բայց շատերը որ արտ ու եղ ունին, իրենց անցեալ տարուան ուտեստը ունենալու համար ստիպուած էին ծայրայեղ պայմաններով իրենց այս տարուան հունձքը գրաւի տալ զրացի ֆիւրտերու, մէկ չափի համար՝ յաճախ երկու կամ չորս չափ խոստանալով, ու ֆիւրտը ասիկա անխնայ կը պահանջէ, թէպէտ յաճախ ատով այս տարուան պակաս հունձքին էն յետին չափն է որ կը խլէ գեղացիին ձեռքէն:

Մեր պաշտպանները կը յիշեն թէ անցեալ գարնան մեծ քանակութեամբ սերմնցու բաշխեցինք, պայմանաւ որ հունձքին ատեն հատուցանեն ատիկա՝ որպէս զի նորէն ալ աւելի կարօտներուն բաշխենք: Մեր առնելիքներուն հաւաքումը զոհացուցիչ չեղաւ, մեծ մասամբ պակաս հունձքին պատճառաւ: Սերմնցուին մեծ մասը բան մը չարտադրեց, եւ տեղ տեղ զեղացիները իրենց վերջին չափը տուին՝ այս պարտքը հատուցանելու համար: Բնականաբար, այս կարգի պարագաներու մէջ, ամբողջ տրւածին իրենց ետ պիտի դարձուի: Լաւագոյն պիտի ըլլար բնաւ բան մը ետ չառնել այս կարգի խեղճերէ, բայց ատով կարելի պիտի չըլլար կարողներէն զանձել իրենց պարտքը: Մեծ քանակութեամբ արմտիք հաւաքեցինք այսպէս, եւ ասիկա ամէնէն աւելի կարօտներուն պիտի բաշխուի, առանց անշուշտ ներկայ կարիքներուն բաւելու: Մեր հաւաքիչներուն կատարած գործին մեծ առաւելութիւնը այն պիտի ըլլայ որ ստոյգ տեղեկութիւն պի-

տի ունենանք իւրաքանչիւր դիւղի ժողովրդին կացութեան ժասին, եւ եթէ ձմրան նպաստ բաշխենք, այնպէս պիտի կրնանք ընել որ իւրաքանչիւր փարա բուն պէտք եղած տեղը երթայ, ու այսպէս պիտի գերծ մնանք սխալներէ սրունք անցեալ տարի անխուսափելի էին: Մեր հաւաքիչները կը հաւատեն մեզի թէ հայ գիւղացիներուն կէսէն աւելին, եւ շատ տեղ ալ քառորդէն աւելին պէտք եղածին չափ ուտեստ ունին մինչեւ յառաջիկայ հունձքը, մինչգեռ մնացեալ կէսէն ումանք կրնան ութ, վեց, կամ երկու ամիս դիմանալ, եւ շատերը այսօր իսկ բան մը չունին:

Բայց մինակ արմտիքը չէ որ պակաս է: Ուրիշ հունձքեր ալ ջուրի պակասութենէն վնասուեցան: Վան քաղքին մէջ, շատ պարտէզներ ջուր չունեցան, ու շատ պտղատու ծառեր չորցան: Մարդերը այնչափ անբաւական էին որ կոժերուն ու ոչխարնեուն կաթը կանուխէն պակսեցաւ, եւ կաթնեղէն բերքերը, որոնք տեղացիներուն սնունդին մէկ մեծ մասը կը կազմեն, հազուադիւրս են, եւ սովի աւտնուան դին ունին: Շատ գիւղեր մինչեւ իսկ ստիպուած են հեռուները երթալ՝ իրենց խմելիք ջուրին համար: Հոն ուր պարտէզներն ու այգիները կըցան նոյն իսկ քիչ մը ջուր ունենալ, պտուղը առատ եղաւ, եւ ասիկա մեծ առաւելութիւն մըն էր այն սակաւաթիւ տեղուանքը ուր պլանտադատու ծառեր կային: Բայց գրեթէ ամէն ուտելիքի գինը արդէն սովորականէն երեք չորս անգամ աւելի է, եւ, որչափ որ կրնանք հիմակուց դատել, սովը ակնդէտ կը սպասէ հայ բնակչութեան կէսին, թէ՛ քաղքին եւ թէ՛ գիւղերուն մէջ, բացի եթէ նորէն վթուածեան ձեռքը կարկառուի իրենց:

Չափազանց դժուար է արմտիք հայթայթել գուրսէն, քանի որ մեզի դրացի նահանգները աւելորդ արմտիք չունին, եւ արտածութիւնը արդիւուած է: Եթէ գուրսէն օգնութիւն մը պիտի հասնի, պէտք է որ անմիջապէս գայ, թէ ոչ ձիւնը ճամբաները անանցանելի պիտի դարձնէ երկու երեք ամիս:

Ահա կացութիւնը ծանօթացուցի, եւ եթէ այսպէս չ'ընէի, ինքզինքս անպարտ պիտի չնկատէի այն հազարաւորներուն արեանը համար որոնք գուցէ սովամահ կորնչին:»

Տր. Բէյնոլտզ իր նամակին մէջ կը յայտնէ թէ եթէ երկու երեք հազար օսկիի արմտիք կարենայ դնել, անասելի բարիք մը պիտի ըլլայ ատիկա նահանգին համար, ընկերութեան հաշիւներէն կը տեսնենք թէ հոկտեմբեր, նոյեմբեր եւ դեկտեմբեր ամիսներուն, 2523 օսկիի գումար մը դրկած է, որբերուն, արհեստանոցներու եւ ընդհանուր նպաստի համար: Չենք գիտեր թէ Տր. Բէյնոլտզ կըցած է ատով իրագործել իր մարդասիրական գաղափարը:

Անցողակի ըսենք թէ ընկերութիւնը, իր հարստութենէն ի վեր (1897), 20,000 օսկի հաւաքած ու ղըրկած է հայ կարօտեալներուն:

ՎԱՂՈՒԱՆ ՆԱՅԱՍՏԱՆԸ

ՈՐԲԵՐՈՒ ԱՊՊԳՄՆ

« Հայաստանի Բարեկամներ » ու ընկերութեան թերթին մէջ, Տր. Բէյնոլտզ շատ շահեկան նամակ մը ունի որբերուն մասին, որուն գլխաւոր մասերը կը ներկայացնենք այստեղ.

« Բաւական թուով որբեր, որոնց տարիքը եկած հասած է գործօն կեանքի սկսելու, իրենց տեղերը դարձած են: 1899ի ամռան, պատեհութիւն ունեցայ անոնցմէ մէկ քանիին այցելելու իրենց տեղերը, եւ ինծի համար մեծ գոհունակութիւն մը եղաւ տեսնել թէ կ'աշխատէին ապրիլ այն սկզբունքներուն համաձայն գործնք սորված կ'իս այստեղ:

« Վերջին ճամբորդութեանս ատեն, վանի հարաւակողմը յիսուն մղոն քաղքէ մը, Տիգրիսի վերի օժանդակներէն մէկուն եղերքը բերեցինք: Չորերէ անցնելով ու դահալէժներ եղերելով, մազլցելով ու իջնելով, վերջապէս հասանք մեր փնտոած գիւղը: Հանդիպող գիւղացիները աչքէ անցուցի տեսնելու թէ պիտի գտնեմ փնտոած աղաս, եւ որովհետեւ չէր երեւար, հարցուցի. « Ո՞ւր է Մնացականը: » Ըսին թէ գիւղէն քիչ մը հեռու գացած էր ընկուզ քաղելու իր ծառերէն. ընկուզը այս լեռնոտ մասին գլխաւոր բերքերէն մին է: Մարդ զրկեցի որ զի՛քը կանչեն, ու շատ չանցած Մնացականը եկաւ, արեւէն այրած ու քրտնաթոր, բայց մեզ տեսնելուն ուրախութեամբը լեցուն: Իրմէ խնդրեցի պտոյտ մը ընել, եւ շատ չանցած՝ մեկուսի տեղ մը գտանք ընկուզեմի մը տակ ուր կրնայինք նստիլ ու խօսիլ: Մեր ոտքին տակ գետը կը փրփրար, ու հորիզոնը չորս կողմէն փակուած էր բարձրաբերձ սեպածե կատարներով: Պատանին իր կեանքը պատմեց ինծի: « Երբեմն, ըսաւ, ինծի կը թուի թէ՛ պիտի չկրնամ այստեղ կենալ, որովհետեւ գիւղին մէջ մէկը չկայ որ ինծի հետ համասիրտ ըլլայ: Երբ ու երիտասարդ ամենքն ալ վարժուած են ստուլու, գոլնալու եւ հայհոյելու, եւ չեն հասկնար թէ ինչո՞ւ եո ալ իրենց պէս ընելու չեմ: »

- Իրենց խօսքերուն կ'անսաս կոր, հարցուցի:
- Դեռ ոչ. բայց երբեմն ինծի կը թուի թէ կարող պիտի չըլլամ աւելի երկար դիմանալ.

Չինքը քաջալերեցի: Գիւղացիները միաբերան խօստովանեցան թէ պատանին օրինակելի կենցաղ մը ունէր:

« Այս գիւղին մէջ երեք ժամ կենալէ յետոյ, ուրիշ գիւղ մը գացինք՝ երեք ժամ հեռու, ժայռերու մէջէ: Յանկարծ քարի մը ետեւ պատանի մը երեւան եկաւ.

- Վայ Մարտիրոս, հարցուցի, ի՞նչ բան ունիս հոս:
- Լեռան կատարն էի, ձեզի տեսայ ու ճանչցայ, ու վազեցի ձեզի ընդ առաջ եկայ:

Ինչ զիւր: Ժայտու կատարի մը ծայրը, տունը
 իրարու վրայ շինուած, ու մէկուն տանիքը՝ միտին հա-
 մար գաւիթն և փողոց: Մարտիրոսի տանը առջեւ կը
 նստինք, զիւրին վրայ նստելով: Եօթը ութ հարիւր խո-
 րութեամբ ձոր մը կ'երկարի մեր ներքեւը, մինչդեռ զիմա-
 ցի լիբան սեպ երեսը ամէն կողմ, բացի ուղղաձիգ մա-
 սերէն, արտերով ծածկուած է: Դիտել կուտամ թէ շնմ
 հասկնար որ եզերը ինչպէս ոտքերնին դնելիք տեղ կը
 գտնեն հերիի ատեն, ու քահանան կը պատասխանէ.
 «Շատ աւելի եզ կը կորսնցնենք լեռն ի վար գլորելով,
 քան ուրիշ ո եւ է կերպով:» Մի առ մի, յոգնած ու քրա-
 նտթոր մարդիկ կուգան, արմտիքի պարկեր շաշակած, գոք
 մէկ մէկու կէտ ժամէն բերած են զիմացի արտերէն, որով-
 հետեւ սայլ չի կրնար բանիլ այստեղ:

Մարտիրոս եւ իր ընկերը Արմենակ երկու տարի որ-
 բանոցը մնացին. անշուշտ շատ առաջացած շեն ուսման
 մէջ, բայց կրթուած են: Կը յուսամ թէ կարելի պիտի
 ըլլայ նախնական վարժարաններ բանալ այս գիւղերէն
 իրաքանչիւրին մէջ՝ այս պատանիներուն տնօրինութեան
 ներքեւ, այնպէս որ զիւրին տղաքը կարենան կարգաւ
 սորվիլ, եւ երբ ալ աւելի ուսած տղաքներ զուրս գան որ-
 բանոցէն, աւելի բարձր վարժարաններ կարելի ըլլայ հաս-
 տատել: Հաւանական է որ մեր պատանիներէն մէկ քա-
 նի ուրիշներ ուլ այս ձմեռ դպրոցներ բանան իրենց զիւ-
 ղերուն մէջ:

«Մեր վանի կեդրոնական վարժարաններուն եւ որ-
 բանոցին մէջ, 1900ի տարեգրութիւն սկսանք նորաշէն
 սրահներուն մէջ, Տղոց թիւն է 300, որոնց 200ը աղ-
 ջիկ ու երախայ: Ամէնէն աւելի խոստմաւից տղաքներէն
 պատիկ թիւ մը արգէն գատած ենք՝ իրենց ուսումը լրա-
 ցընելու համար բարձրագոյն վարժարանին մէջ, ու ասոնք
 իրենց ժամանակին կէսէն աւելին իրենց գասերուն պիտի
 նաւիրեն, առանց անտեսելու սակայն իրենց սորված ար-
 հեստները: Միւս կողմէ, տարիքոտ տղաքներէն շատեր
 որոնք աւելի արհեստի յարմարութիւն ունին քան ուսման,
 իրենց ժամանակին կէսէն աւելի արհեստի պիտի նուր-
 բեն, որպէս զի մէկ երկու տարիէն վարպետ ելլեն: Մե-
 ծամասնութիւնը սակայն կը շարունակէ հաւասար ժամա-
 նակ նուիրել ուսման եւ արհեստի, ու պատիկները, տա-
 րիքնին հասնելուն պէս, հետզհետէ արհեստանոցը կը
 զրուին:»

ՊՈՏՃԷՆ ՊՈՏՐԻՍՐԲՈՎԱՆ ՀՐԱԺԱՐԱԳՐԻՆ

Ամերիկայի Չայն Հայրենեաց թերթը կը հրատա-
 րակէ Օրմանեան պատրիարքին թիւրք կառավարութեան
 տուած հրաժարագրին պատճէնը որ հետեւեալն է:

* * *

«Սիսի կաթողիկոսի ընտրութեան ձեւակերպութիւն,
 ները՝ հիմնուած Հայ Եկեղեցւոյ Եկեղեցական կանոննե-
 րուն եւ հիմնական սկզբունքներուն վրայ, վաւերացուած
 էին Հիճրէթի 1288 թուականին կայսերական իրատէով
 մը, և արգէն գործադրութեան զրուած երկու նախորդ ընտ-
 րութեանց մէջ:

Իրաւացի էր սպասել որ միևնոյն սկզբունքները և ձե-
 ւակերպութիւնները գործադրուէին ներկայ ընտրութեան
 մէջ ալ, բայց կ'իմանանք թէ ընդհակառակն այս միջոցին
 Ատանայ ընտրական գործողութիւնները նախկիններուն
 բոլորովին հակառակ ուղղութեամբ կը կատարուին:

Տարակոյս չի մնար այլ եւս թէ ընտրական նոր զրու-
 թիւնը կը ձգտի հանել կիլիկիոյ կաթողիկոսութիւնը Կ.
 Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան վարչական իրաւասու-
 թեանէն:

Կ. Պոլսոյ փառաւոր զրաւման ժամանակէն ի վեր, Կ.
 Պոլսոյ Հայոց Պատրիարքութիւնը ճանչցուած է կայսե-
 րական կառավարութեանէն իբրեւ Պատրիարքութիւն թիւր-
 քիոյ մէջ բնակող բոլոր Հայոց:

Նոյնպէս, կրօնական ու եկեղեցական առանձնաշը-
 նորհութեանց պահպանումը, արձանագրուած Բ. Դրան
 կայսերական մեծ դիւանի տոմարներուն մէջ, նշանակուած
 Պատրիարքներուն, կաթողիկոսներուն եւ Հայ առաջնորդ-
 ներուն շնորհուած Պէրաթներուն մէջ, եւ կրելով Օս-
 մանեան վեհապետաց գերագոյն վաւերացումը, կը գտնուի
 կայսերական կառավարութեան երաշխաւորութեան տակ:

Ներկայիս եւս, Նորին կայսերական վեհափառու-
 թիւն սուլթանը, մեր օգոստափառ աւերը (°) բարեհաճած
 է՝ մասնաւոր իրատէով՝ հրամայել որ Սիսի կաթողիկոսի
 ընտրութեան բոլոր ձեւակերպութիւնները գործադրուին
 ճշգրիտ կերպով համաձայն այն կանոններուն, որք գոր-
 ծադրուած էին նախկին ընտրութեանց ատեն եւ չըլլայ
 թէ զանցառութիւն պատահի ատոնց մէջ:

Դիւրագրաբար, այս միջոցին կը գտնուինք հանդէպ
 կացութեան մը, որ կը զրկէ Հայոց Պատրիարքութիւնը
 այն բոլոր իրաւունքներէն և իրաւասութեանէն զորս ի վա-
 ղընչուց ունէր Սիսի եւ իրեն բնթարկուած սահմաններու
 հայ ժողովրդին վրայ, եւ որ կը զրկէ միևնոյն ատեն Կ.
 Պոլսոյ Հայոց Պատրիարքը ամբողջ թիւրքիոյ մէջ գտնուող
 և միևնոյն ցեղին ու կրօնին պատկանող բոլոր Հայոց
 Պատրիարքը ըլլալէ:

Ես արգէն կը գտնուէի անտանելի կացութեան մը մէջ.
 վասն զի անյաջող եղած էին այն խնդրանքները և պա-
 հանջները զորս ներկայացուցած էի Հայոց Պատրիար-
 քութիւնը և ազգը շահագրգռող զանազան խնդիրներու
 կարգադրութեանց համար, նոյնպէս բազմապատիկ ան-
 հրաժեշտ պէտքերու հոգածութեան համար ինչպէս նաև
 շնջել տալու մասնաւորապէս միայն Հայոց համար ըս-
 տեղծուած բացառիկ միջոցները, միջոցներ՝ որք յառաջ
 կը բերեն ամենէն ծանր բարոյական և նիւթական վը-
 նասներ:

Սիսի կաթողիկոսութեան նկատմամբ ձեռք առնուած

նոր միջոցները որք նոյն իսկ հայ Եկեղեցւոյ Սահմանադրութեան վերաբերող կանոնները կ'անտեսեն, եւ ներկայ դրութեան պահպանման հակառակ են, աւելի կը ծանրացնեն իմ դրութիւնը:

Բայց իմ նախորդներս կրցած են պահպանել Կ. Պոլսոյ Պատրիարքութեան իրաւունքները Սիւսի կաթողիկոսութեան հանդէպ: Սակայն ինծի զլացուեցաւ վաղընջուց նուիրագործուած այս հոգեւոր իրաւունքներու և արտօնութեանց նկատառումը:

Այն պատրիարքութեան ամօտին վրայուր կը գտնուիմ, ինծի բացարձակապէս անկարելի է իրացայս վիճակը անտարբերութեամբ նկատել. և որպէս զի պատասխանատու չմնամ առաջի Աստուծոյ եւ վեհափառ սուլթանին, ինչպէս նաև հանդէպ Հայ Եկեղեցւոյ եւ ազգի, ստիպուած կը զգամ ինքզինքս քաշուիլ Պատրիարքական պաշտօնէս և կը խնդրեմ որ բարեհաճիք ընդունիլ հրաժարականս:»

(Ներկայացուած դատական և կրօնական գործոց նախարարութեան 21 մարտ 1900):

ԹԻԻՐՔԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՍԸ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՀԱՆՁՈՒՄՆԵՐԸ

Ծովակալ Ահմէտ փաշա որ Պոլսէն հապճեպով Ամերիկա զրկուած էր որպէս զի մարտանաւի մը գնումին պատուակաւը գոհացում մը տայ Վաշինկթոնի կառավարութեան պահանջումներուն, ժամանած է իր տեղը: Բայց տեսնելով որ գաղտնիքը երեւան ելած է, եւ միանգամայն ո՛ր եւ է տրամադրութիւն չի կայ կառավարական շրջանակներու մէջ այդպիսի վարպետութեանց համակերպելու, պարտաւորուեք է յայտարարել թէ ինք ո՛ր է քաղաքական ձեռնարկի համար եկած չէ, այլ միայն պիտի ուսումնասիրէ Ամերիկեան նաւատորմը ու անոր կազմակերպութիւնը: Այս յայտարարութեամբ կը յուսայ ծաղրելի ըլլալէ ազատիլ:

Իսկ Վաշինկթոնի դահլիճը ստիպողական հրահանգներ զրկած է Կ. Պոլսոյ զեսպանատան գործակատարին որպէս զի Դոնէն անմիջապէս պատասխան ուզէ Միացեալ-Նահանգներու պահանջումին համար: Առ այժմ որոշուած է Ամերիկեան զեսպանը Կ. Պոլիս չվերադարձնել մինչեւ այս խնդրին կարգադրութիւնը:—Կ'երեւի թէ սուլթանը այս անգամ իր դէմ պիտի տեսնէ ու՛մ մը որուն հետ խաղալ ներքի պիտի չըլլայ:

ՄԱՔՍՍԵՅԻՆ ՏՈՒՐՔԻՆ

Դուրը զեսպաններուն բողոքին վրայ ետ առաւ մայիս 14 էն սկսեալ մաքսային երեք յաւելման որոշումը:

Բանակցութիւններ պիտի կատարուին յառաջիկայ մարտին այդ յաւելումը ընելու համար: Պետութիւնները տրամադիր կ'երեւին զիջողութիւն ընել Դրան, պայմանաւ որ մաքսային կարգ մը բարենորոգումներ ներմուծուին: Դեսպանները մասնաւորապէս կուզեն որ տարբալուծութեան նեղացուցիչ դրութիւնը ջնջուի: Յայտնի է թէ սուլթանը այնքան մեծ վախեր ունի կարգ մը նիւթերէ որոնք պայթուցիկ լինելու կը ծառայեն որ ամենախիստ միջոցներ ձեռք առնել կուտայ այն վտանգաւոր նիւթերուն Պոլիս ներմուծումը արգիլելու համար: Եթէ պետութիւնները այդ միջոցներուն ջնջումը պահանջեն որպէս զի իրենց հաւանութիւնը տան մաքսային տուրքի բարձրացման, սուլթանը ծայրահեղ վարանումի մը մէջ պիտի մնայ:

ԵՐԻՏՐՍՍՐԻ ԹԻՒՐՔԵՐԸ

Ջինուորական և քաղաքական դատակարգելու պատկանող առաջնակարգ անձերու փախուստի լուրերը ամէն օր Երոպա կը հասնին: Վերջին տեղեկութեանց համեմատ Պոլսէն հեռացողներուն մէջ են՝ ոստիկանութեան նախարարին զաւակը Մութաֆա պէյ, եւ թնդանսթաձիգներու սպայ Միւսէլիմ պէյ: Միանգամայն կը հաղորդուի թէ զեր ծովակալ Համաթիֆաշա որ երբեմն Կ. Պոլսոյ նաւահանգստին տեսուչ էր, յետոյ Պասրայի կառավարիչ, ու վերջերս ալ Հալէպ կը բնակէր, Պոլիս կանչուած ըլլալով՝ իբր Երիտասարդ Թիւրքերու համախոհ՝ փխտանակ սուլթանին հրամանին հնազանդելու, ուղղակի Երոպա անցեր է:

Անգլիական մամուլը մեծ գովեստով կը խօսի յատկապէս Իսմայիլ Քեմալ պէյի վրայ, կը զրուատէ զայն իբր զօրեղ նկարագրի տէր մէկը, արգարակորով հայրերենասէր. իր փախուստը կը հաստատէ թէ ս՛ր եւ է մարդ որ լուսաւորեալ գաղափարներու տէր է չի կրնար հիմակ Թիւրքիա բնակիլ:

Մայիս 6 կիրակի օրը Շահ-Չատէ Պաշի ինչպէս նաև ուրիշ տեղուանք մզկիթներու վրայ գունաւոր թուղթով յայտարարութիւններ փակցուած էին սուլթանին դէմ, «Իսլամական Միութիւն» կնիքով եւ հինգ վեց Իսլէմայի ու Սօֆթայի ստորագրութեամբ: Ստորագրութեանց տիրուրտանքը անմիջապէս ձերբակալուեցան: Սակայն թէ Պոլիս եւ թէ Երոպա կը կարծուի որ այդ յայտարարութիւնները պարզապէս ոստիկանութեան դաւադրութիւնը եղած ըլլայ ընդդէմ կարգ մը անձնաւորութեանց, վասն զի ոչ ոք կրնայ համարձակիլ Թիւրքիոյ մէջ ակներեւ կերպով սուլթանին դէմ գրել կամ խօսիլ: Այս նկատողութիւնը բանաւոր է, մանաւանդ երբ կը տեսնենք թէ քառորդ գարու մը մէջ ոչ ոք համարձակեցաւ քաջաբար սուլթանին դէմ ելլել՝ յօժարակամ անձնուէր իսլամ մը չգտնուեցաւ: Բայց չե՛նք կրնար ենթադրել թէ վե՛րջապէս իսլամներն ալ կը սկսին արթննալ, ու տեսնելով իրենց պետութեան ահռելի վիճակը, եւ մօտալուս կործանումի վտանգը, իրենց մէջ գտնուին քանի մը անձեր որոնք օրինակ առնելով «բայա» Հայոցմէն, խորհին թէ առանց

անձնուիրութեան փրկութիւն չի կայ. ու յօժարին զոհել անձեռնին, համոզուած ըլլալով որ անձնագոհողութիւնը համաճարակ մըն է որմէն երբ ժողովուրդ մը բռնուի, բռնապետներուն վերջին ժամը կը հնչէ: Կը զգանք թէ ենթադրութիւննիս շատ լաւատեսական է, որուն մենք ալ դժուարութեամբ պիտի հաւտանք, բայց իրականացումը բոլորովին անհնարաւորութեանց կարգէն չէ: Ոչ ոք կըրնայ թուաբանական ճշգրտութեան ենթարկել ճնշուած ժողովուրդներու զգացումները:

Հակասութեանական շարժումը Պոլիս իսլամներուն մէջ հետզհետէ կը տարածուի. հետեանքները սկսած են ըստ պահանջից երենալ, սուլթանին կեանքը ծանրապէս վրտանգուած է: Երիտասարդ թիւրքերը հիմակ Երլտըզ ոտք դրած են, ու առաջին փորձ մը ըրեր են սուլթանը մեղցնելու համար. անոր ստեղծելը թանաւորեր են. ու պարզապէս դիպուածով միայն դաւը երեւան ելած է: Այս յայտնութեան վրայ Պոլիս իսլամներուն զէմ խտութիւնները կը բազմապատկուին: Պալատին խոհանոցը ծայրայիղ հսկողութեան ներքե առնուեր է. բժշկութեան վարժարանին ուսուցիչներէն մէկը ձերբակալուեր է, նմանապէս ուստիկանութեան պետի մը տղան ալ: Ասոնցմէ զատ բնատարիւեր են նաև բազմաթիւ ուրիշ երիտասարդներ. աւանդն ալ ուսում առած, կրթուած, եւ առաջնակարգ ընտանիքներու պատկանողներ: Մաս մը ասոնցմէ քատարուեր են ներքին նահանգները:

* * *

Սրանտարտի Կ. Պոլսոյ թղթակիցը կը հաղորդէ թէ այս աքսորուող երիտասարդներէն շատերուն կառավարական պաշտօններ տրուած են Ասիոյ մէջ, «թէ եւ, կը յաւելու, շատ հետաքրքրական է որ Կառավարութիւն մը պաշտօնի կոչէ քաղաքականապէս կասկածանքներ»: Ու կը շարունակէ ըսելով «Արևմուտքի հանրային միտքը կարող չէ ըմբռնել թիւրքերոյ մէջ տիրող դրութիւնը: Սակայն ճշմարտութիւնը այն է որ սուլթանը, որուն գաղափարները բնաւ անձուկ չեն, այնպէս շրջապատուած է մակարոյծներու խումբէ մը որոնք դիտմամբ կը ծածկեն կայսրութեան իրական վիճակը ու այդ մասին Եւրոպայի կարծիքը, որ անկարելի է գուշակել թէ արդի վարչական դրութեան շարունակութիւնը սրբան մահաբեր պիտի կըրնայ ըլլալ: Պատճառներ ունիմ հաւտալու որ օտար մասուլիս մէջ սուլթանին նպաստաւոր ինչ որ գրուի երբեք իրեն չհաղորդուիր: Երլտըզի խմբակը որպէս զի կարենայ ապրիլ կը ջանայ որ սուլթանը միշտ խաբուած մնայ բոլոր Պետութիւններուն տրամագրութեանց մասին, մասնաւորապէս Անգլիոյ, որ սուլթանը շրջապատողներէն ոչ ոք կը կաշառէ: Կարելի է ըսել թէ Ամերիկայի զեսպան Պ. Վալլասի ժամանակէն ի վեր սուլթանը երբեք ճշմարտապէս անշահախնդիր խորհուրդ մը չը լսեց, վասն զի հիմակուան Դեսպանական Մարմէն ոչ ոք երբեք մտաբերեց սուլթանին մօտենալ եւ բարեկամաբար բարե-

պատեհ խորհուրդներ տալ:»

Ինչպէս կը տեսնուի այս տողերէն ջանք մը կայ որ Անգլիոյ պահպանողական միջավայրերուն մէջ սուլթանը իբր զոհ մը նկատուի: Իբր թէ այն հին ժամանակները եւ դած ըլլայինք ուր ոչ մասուլ կար, ոչ հեռապիր, ոչ մի բան, եւ սուլթանները «Լալա, ինչ կայ» ըսելով իրենց բոլոր տեղեկութիւնը բանի մը փաշայէ կը լսէին: Սուլթանը մինչեւ առտիճան մը չքննարկեցնելու ջանքերը ապարդիւն կը մնան: Ահա միևնոյն թերթը «Դիւանագէտ մը» ստորագրութեամբ նամակով մը կը ջրէ Կ. Պոլսէն յայտնուած կարծիքը:

«Նախ եւ առաջ ինծի ներուի հարցնել կ'ըսէ Դիւանագէտը, ո՞վ է սր սուլթանը պաշարել տուած է կարգ մը վատահամբաւ մարդոցմէ որոնք պալատի խմբակ կը կոչուին: Երկրորդ՝ սուլթանը երբեք ո եւ է ժամանակ իր բուրտիքը ժողովեց պարկեշտ եւ լուսաւորեալ պետական անձնաւորութիւններ, եւ անոնց անշահախնդիր խորհուրդը լսեց: Քանի մը անուններ միայն յիշեցնենք. Միտհատ փաշա, Սատըզ փաշա, Մուխթար փաշա, Բալիֆ փաշա, Հասան Ֆէհմի փաշա, եւ վերջերս ալ Տամատ Մահմուտ փաշա եւ Իսմայիլ Ֆէմալ պէյ ինչ եղան: Այս մարդիկը սուլթանին միշտ ճշմարտութիւնը ըսին, եւ ատոր փոխարէն՝ կամ կեանքերնին կորսնցուցին, կամ տարագրութեան մէջ կը մզլտին:

«Իրողութիւնը այն է որ սուլթանը ճշմարտութիւնը կ'ատէ, եւ կարող չէ հանգուրժել այն մարդոց որոնք պարկեշտ են, եւ իրենց երկրին բարիքը կուզեն: Կը յիշեմ որ Ղալի Օսման փաշա անգամ մը աչքերը արցունքով լեցուած ինծի ըսաւ. «Այլ որոշեցի ասկէ ետքը սուլթանին ո եւ է խորհուրդ տալէ հրաժարիլ: Վասն զի երբոր անշահախնդիր խորհուրդ մը կուտամ իրեն, ինքն ալ կամաւ միշտ անոր հակառակ ընթացքի կը հետևի, որով մինչ ես կուզեմ աղեկութիւն ընել, կը տեսնեմ թէ շար գործերու գործիք կ'ըլլամ միայն:» Բազմաշխատ Տեղեկագիրը զոր երեք տարի առաջ Իսմայիլ Ֆէմալ պէյ պատրաստեց, եւ իր ձեռքովը սուլթանին ներկայացուց, նմանապէս շատ ճշմարտութիւններ կը պարունակէր, եւ եթէ ատոր հեղինակը վերջերս պարտաւորեցաւ իր երկրը թողուլ պատճառը այն է որ անվստօրէն սուլթանին հասկցուցած է թէ վտանգաւոր ճամբէ կ'ընթանայ:»

Իսկ այն առարկութիւնը թէ՛ «սուլթանին մակարոյծները կայսրութեան իրական վիճակը եւ անոր մասին Եւրոպայի կարծիքը սուլթանէն կը ծածկեն» բացարձակապէս կը հերքեմ այս տեղեկութեան ճշտութիւնը: Ոչ մէկ վեհապետ Ապտիլ-Համիտէն աւելի լաւ տեղեկութիւն կը ստանայ: Երլտըզի Պալատը յիսունէն աւելի թարգմանիչ կան որոնց գործն է բառ առ բառ թարգմանել ո՛ր եւ է լուր որ աշխարհիս մասուլիս մէջ հրատարակուած է իր վրայ. ճաբանական լեզուն իսկցուցակէն զուրս չէ թողուած: Ճշմարիտ չէ որ «սուլթանը երբեք չտեղեկանար օտար մասուլիս մէջ իր վրայ նպաստաւոր դրուածներուն»: Իրողութիւնը այն է թէ սուլթանին հոգը չէ լսել իրեն նը-

պատուաբար — շատ հազուադէպ պարագայ մը — դնահա-
տումները: Առտուն իր առաջին մտածութիւնը, անձկու-
թիւնն է զիտնալ թէ Երլարդի պալատը եւ իր կայսրու-
թեան մէջ գործուած ոճիւրները եւրոպական մասուլին հա-
ղորդուած են թէ ոչ:

Գալով այն հաւատումին թէ «սուլթանին միտքը
շատ բաներու մէջ անձուկ չէ» կը բաւէ հարցնել թէ ո՞վ
էր Հայկական կոտորածներուն բուն իսկ հեղինակը:
Ով է որ հիմա քրիստոնեաները կը մուշտանդէ ընդդէմ ի-
րենց քրիստոնեայ հայրենակիցներուն: Եւ վերջապէս ի՞նչ
պատճառի վերագրելու է Կրետէի իսլամներուն ընթացքին
մոգական փոփոխութիւնը: Իրողութիւն մը չէ՞ որ կղզիին
մուշտին իսլամները կատարեալ գառնուկներ զարձան այն
օրը ուր վերջ մը զրուեցաւ սուլթանին մեքենայութեանցը:
Յանուն կրօնքի սուլթանը միշտ կը շահագործէ իր տգէտ
հպատակներուն մուշտանութիւնը: Ու հիմակ կը ջանայ
Մակիդոնիոյ զանազան դաւանանքներու պատկանողները
ասելութեամբ իրարու դէմ զինելով պատրաստել այնպի-
սի արեւնալիք զէպքեր որոնք Անատոլիոնները զերզան-
ցեն: Սակայն լուսաւորեալ բոլոր մահմետականները կը
բողոքեն սուլթանին այս ոճրագործութեանց դէմ: Հէճիրի
չորրորդ թուականի նշանաւոր հրովարտակով մը, զոր
չենց կրնար ամբողջապէս առաջ բերել երկայնութեանը
պատճառաւ, Մոհամմէտ իր հետևողներուն կը պատուիրէ
«Քրիստոնեաները պահպանել իրենց թշնամիին դէմ, եւ
պաշտպանել անոնց եկեղեցիները. ո՛չ մէկ քրիստոնեայ
հաւատուրացումի բռնադատել...: Եթէ քրիստոնեաները
օգնութեան պէտք ունենան իրենց եկեղեցիները կամ վան-
քերը վերանորոգելու համար, կամ իրենց կրօնքին վերա-
բերեալ ո՛ր եւ է բանի մը, հարկ է որ մահմետականները
անոնց նեցուկ ըլլան եւ օգնեն.» Ինձի կը թուի թէ լայն
հայեացքներով վեհապետ մը փոխանակ հաւատք մը ու-
րիչ հաւատքի դէմ հանելու եւ ամէնքը հաւասար խոշտան-
գումներով տտապեցնելու, պէտք էր իր ընթացքը հա-
մաձայնեցնէր վերոյիշեալ հրովարտակին եւ անոր բարձր
իմաստը իր հպատակներուն քարոզէր:

Բայց Ապտիւլ-Համիտ ո՛չ իսլամական ճշմարիտ վար-
դպետութեանց համեմատ կը կառավարէ, եւ ոչ ալ ար-
դարութեան եւ վարչութեան համար եւրոպական ըմ-
բռնումներու համաձայն: Իր գրութիւնը կամայական է
եւ աշխարհիս վրայ մէկը չի կայ որ կարենայ զայն խելքի
բերել եւ ողջամտութեան:

Տամատ Մահմուտ փաշա Ժընէվէն Բարիզ անցաւ,
եւ անկէ չուշանար Լոնտոն կուգայ: Անգլիական մայրա-
քաղաքն է ուր կորովալիք ճակատամարտը պիտի մղէ
սուլթանին քաղաքականութեանը դէմ, մինչեւ որ իրա-
կանապէս գործնական արդիւնքներ ձեռք բերէ: Բազմա-
թիւ ականաւոր թիւրքեր արդէն իրենց համամտութիւնը
յայտնած են այս կողմին համար: Փաշան կը յուսայ

Անգլիոյ հանրային կարծիքը իրեն զօրավիզ ունենալ եւ
օսմանեան կայսրութեան վերածնունդը ողջունել: Իր բու-
լոր ջանքն է քաղաքակիրթ աշխարհին համարուած դրա-
ւել թիւրքիոյ ի նպաստ, ջանալով ցոյց տալ թէ օսման-
եան կայսրութեան յետադիմական եւ քայքայեալ վիճա-
կը ոչ թէ իսլամական կրօնքին պատճառաւ է, այլ բըռ-
նապետութեան: Բացարձակօրէն կը յայտարարէ թէ ա-
րեւմտեան քաղաքակրթութեան թիւրքիոյ մէջ ներմուծ-
մամբ ու տարածումովը երկիրը կը փրկուի կործանու-
մի վտանգէն:

Իսլամութեան անցեալին վրայ պատմական տեսու-
թենէ մը յետոյ, Մահմուտ փաշա անգլիական թերթին
թղթակցին կ'ըսէ.

«Շատ մը պատճառներ ունիմ հաւատալու թէ Արեւ-
ելքի իսլամ պետութիւնները, — խօսելով թիւրքիոյ եւ
Պարսկաստանի վրայ միայն որոնք իրենց անկախութիւնը
պահած են, կրնան վերածնիլ առանց կրօնքին փո-
խելու: Այդ վերածնունդին անհրաժեշտ պայմանը վե-
րանորոգեալ իսլամութիւն մը պէտք է ըլլայ, որ գարուս
զաղափարներուն եւ սովորութեանցը յարմարի, եւ իսլամ
երկիրներուն համար հնարաւոր ընէ այն գիտական շար-
ժումը որ Արեւմուտքի իրական ուժը կը կազմէ: Հետեւ-
բար ես այն գործնական եզրակացութեան յանգած եմ թէ
պմէն բանէ առաջ պէտք է իսլամներուն մէջ կրթութիւնը
ընդարձակօրէն տարածել: Ժողովուրդի մը ապագան ա-
պահովելու համար բաւական չէ սակաւաթիւ նշանաւոր
անձեր առաջ բերել: Առանց հաստատ եւ լայնատարած
հիմի մը զօրեղ քաղաքակրթութիւն մը չի կրնար ըլ-
լալ: Իսլամութիւնը չէ որ տգիտութիւն եւ նախապաշա-
րում կը ծնի: Գալով թիւրքերուն, կարելի չէ ըսել թէ ա-
նոնք զուրկ են բարոյական զգացումէ, խելքէ, կորովէ:
Բացի Արաբական ուրիշ ո՛ր եւ է տիրապետութիւն թըր-
քականէն աւելի արագատարած եւ երկարատեւ եղած
չէ: Թիւրք կառավարիչներէն ոմանք, օգտուելով կրօնա-
կան եւ քաղաքական իշխանութեանց ի մի ձուլումէն, բըռ-
նապետներ եղան, եւ այդ բռնապետութիւնը կայսրութեան
քայքայումը առաջ բերաւ: Երբ ժողովուրդի մը հետ իբր ոչ-
խաբնորու խումբ մը կը վարուին, այդ ժողովուրդը վերջը
վերջը ոտք կ'իջլէ իր անկախութեան եւ ազատութեան ար-
դար իրաւունքները ձեռք բերելու համար: Այսպէս է ա-
հա որ Պուլկարիա, Սերպիա, Մօնթենեկոյ, Պոսնիա,
Հերզեկովին անջատուեցան թիւրք կայսրութեանէն: Ապ-
տիւլ-Համիտի բռնակալութիւնը եւ վատթար վարչութիւ-
նը արագեցին այս զէպքերը: Եւրոպական պետութեանց
մէկ մէկու դէմ նախանձը, եւ իրենցմէ տարբեր ուրիշ ցեղի
մը լուծին ներքեւ իյնալու վախն է որ կ'անդամալուծէ ան-
կախութեան ի նպաստ շարժումը այն ժողովուրդներուն
մէջ որոնք դեռ սուլթանին իշխանութեան ներքեւ են:
«Կը կարծեմ թէ բաւական բան ըսի ցոյց տալու հա-
մար թէ Արեւելքը տառապեցնող շարիքներուն պատճառը ոչ
թէ իսլամութիւնն է այլ բռնապետութիւնը: Իսլամութիւնը
չի կրնար յառաջդիմութեան արգելք ըլլալ եթէ իր սկզբ-

բունքները օրուան պահանջումներուն յարմարցնէ: Իսլա-
մութեան վերածնունդին նախաձեռնութիւնը Թիւրքիան
է որ պէտք է ստանձնէ. բայց ամէն ջանք պարզին պի-
տի մնայ որքան ատեն որ սուլթանին իշխանութեան սահ-
ման մը չէ զրուած: Այն Թիւրքիան որ Եւրոպայի կարծի-
քով քաղաքական մահուան վերահաս վտանգին մէջ է,
այն Թիւրքիան կրնայ փրկուիլ, ու միակ միջոցը ուրիշ
բան չէ բայց եթէ սուլթանին իշխանութեան օրինաւոր
սահմանափակումը, ջնջելով պաշտական շողոմարա-
ներու և խորհրդականներու դրութիւնը: Իմ մասին կը հա-
ւատամ թէ Արևելք հաստատամիտ առաջադրութեամբ կըր-
նայ անցնիլ այն լայն անջրպետէն որ զինքը կը բաժնէ
արդի քաղաքականութիւնէ: »

Մտալուտ պատահարներուն կասկածը կը տարա-
ծուի: Տիրող անհանգստութեան վրայ Թայլոզ զաղափար
մը կուտայ Վիեննայէն ստացած թղթակցութեամբ մը որ-
մէն հետևեալը մը քաղնք:

« Հոռ (Վիեննա) ստացուած մասնաւոր տեղեկութեանց
նայելով Թիւրքիոյ մէջ վարչական ճնշումի եւ զեղծման
դէմ գծողութիւնը շատ վրդովիչ համեմատութիւններ
կ'անէ: Մահմուտ Տամատ փաշայի փախուստը և հի-
մակ ալ Քէմալ պէյին Պուլէն հեռացումը կը նկատուին
իբր յայտարար նշաններ գործերու կացութեան մը որ
կրնայ վայրկեանէ վայրկեան տագնապ մը յառաջ բերել:
Սեւ ծովու հովտին մէջ Ռուսիոյ տրուած երկաթուղիի
մենաշնորհը մեծ գծողութիւն առթեց հայրենասէր Թիւր-
քերու, որոնք այդ զիջումը կը նկատեն իբր սուլթանին
վեհապետական իրաւանքներուն բնութարար: Աւստիոյ
և Ռուսիոյ միջեւ կարգադրութիւններ եղած են Պալ-
քանեան կղզիին արդի վիճակը պահպանելու համար,
բայց ո՛ր եւ է համաձայնութիւն չի կայ Պոլիս հանգարտու-
թիւնը պահել տալու համար: Եւ արգարեւ շատ հաճիլի
չէ մտածել թէ Վլասփորի վրայ ինչ կրնայ պատահիլ սաստ-
կայով ցնցումի մը պահուն: Այսպիսի պատահականու-
թիւն մը թէև անխուսափելի կ'երևի բայց առջեւ տոնե-
լու համար տնօրինութիւն մը ոչ եղած է, եւ ոչ ալ կըր-
նայ ըլլալ: »

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՌՈՒՄԻԱ. Կ. Պոլսէն ակզիական
րեքրերուն հետևեալը կը հետագրեն. « Ռուսական դես-
պանատունը Դրան ուղարկուած իրաւաբան տնօրէ-
նու հաշիւներէն արտաքին Հայոց դիմ գործադրուած բռն
միջոցներուն պատճառաւ փոքր-Ասիոյ Արեւելեան գա-
նազան գաւառներուն մէջ առաջ եկած կացութեան վրայ: »

Հայոցն շատեր Մանկեակալութիւնը ընդունած են
հաշիւներէ խոշարելու համար: Այս հաշիւներէն
քեան դիպքերը տեղի ունեցեր են մասնաւորապէս Հեր-
քեսի և Սիւրդ: Տեղեկութիւններ հասած են որ բազ-
մաթիւ գիշերերու հայ բնակիչները կը պատրաստուին
խմբովի Ռուսիա գաղթել:

« Ռուսական դեսպանատան այս միջամտութեանը մեծ
կարևորութիւն կը վերագրուի հոս: »

ԱՒՍՏՐԻՈՅ կասալարութիւնը Կ. Պոլսոյ դեսպա-
նատան զինուորական կցորդին յատուկ պաշտօն տուած
Հայաստան այցելել, դիպի քիչքիչ տուած սահմանագրուիլ:
Այս առիթ Պոլիս ծանրկէկ միջադէպ մը պատահած է:
Թիւրք իշխանութիւնը ոչ միայն ո՛ր և է պաշտօնական
յանձնարարութիւն չէ ուղարկուած տալ այցելուին, այլ եւ ան-
ցագիր իսկ զրացեր է. ու երբ զինուորական կցորդը
կոզգէ շոգեկուտ երբայ, արգելքի կը հանդիպի ուստիա-
նութեան կողմէն: Եւ կը դառնայ դեսպանատան պա-
հակ շոգեկուտը կը մտնէ եւ շիտակ կոզգայ Լոյսի Աշորա
շոգեկուտը, ու կը մեկնի Պոլսէն: Կ'ըսուի թէ Ռուսական
դեսպանատունը ջերմ յանձնարարականներ տուած է այ-
ցելուին, որուն պաշտօնին շատ կարևորութիւն կ'ըն-
ծայուի:

ԹՐԲՈՎԱՆ ՄԱՐՏԱՆԱԻՐԸ. Մուրսանը իր և-
ստորմը վերանորոգելու խորհուրդը յղացած է. ու այս
առիթ ծովակալներ պիտի դրկէ զանազան երկիրներ
հարկ եղած քննութիւնները ընելու համար: Բայց կար-
ծիք մը կայ թէ Հայաստանի կոտորածներուն առիթ
Եւրոպական զանազան պետութեանց հետ հաշիւները
կարգադրելու միջոց մը պիտի ըլլայ այս վերանորոգու-
մի խնդիրը: Կը յիշուի թէ անցեալները բրքական մար-
տանաւ մը յանկարծ ճեղնուիլ դրկուելու իտալական ևս-
տարանին մէջ նորոգուելու համար. Պոլիս գիտցուած ի-
րողութիւն մըն է թէ սուրբանը այդ նորոգումին ծախքին
մէջ մտցուց հայկական դիպքերէն իտալիոյ ունեցած
պարտքին մէկ մասը:

ՀԱՍՅԷ ԵՒ ԲԱՍՆԵՐԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին
եւ 1 թիւ: Բաժնեկիւն է Եւրոպայի համար տարեկան 10
եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2
ու վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեկիւն
զրկել ա՛ն՝

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.